

## ԹՈՎՄԱՍ ՆԱԶԱՐԲԵԿՅԱՆԻ ԱՆՏԻՊ ՀՈՒՇԵՐԸ

Ռազմական գործողությունները Կովկասյան ճակատում  
1914 թ. հուլիսից մինչև 1916 թ. ապրիլի 26-ը\*

**Բանալի քառեր** – Թովմաս Նազարբեկյան, Հովհաննես  
Հախվերդյան, Անդրանիկ, Դրո, Համազասպ, Քեռի, Հակոբ  
Զավրիյան, Վորոնցով-Դաշկով, Ն. Յուդենիչ:

Առաջին աշխարհամարտի ավարտի 100-ամյակի կապակցությամբ ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում նրա ականավոր մասնակիցներից մեկի՝ հայազգի գեներալ-լեյտենանտ Ֆոմա Իվանի (Թովմաս Հովհաննեսի) Նազարբեկյանի<sup>1</sup> (1855–1931) այդպես էլ անտիպ մնացած հուշերի հայերեն թարգմանությունը, որը խիստ արժեքավոր սկզբնաղբյուր է պատերազմի առաջին տարիներին Կովկասյան ճակատում ծավալված ռազմական գործողությունների և դրանցում հայ կամավորականների մասնակցության համակողմանի քննության համար:

Մինչ օրս հրապարակվել է հայ ժողովրդի համար բախտորոշ 1917 թ. նոյեմբերից մինչև 1918 թ. հուլիսն ընկած ժամանակաշրջանն ընդգրկող Թ. Նազարբեկյանի հուշերի վերջին հատվածը՝ ռուսերեն բնագրով և ակադեմիկոս Հրանտ Ավետիսյանի խմբագրությամբ<sup>2</sup>: Սակայն անտիպ է մնացել Թ. Նազարբեկյանի հուշերի առաջին մասը, որն ընդգրկում է Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ռուս-թուրքական (Կովկասյան) ռազմաճակատում 1914 թ. հուլիսից մինչև 1916 թ. ապրիլի 26-ը ծավալված ռազմաքաղաքական իրադարձությունների նկարագրությունը: Ցավոք, մեզ չհաջողվեց արխիվում գտնել դրա շարունակությունը հանդիսացող 1916 թ. ապրիլից մինչև 1917 թ. նոյեմբերն ընդգրկող հատվածը:

Զորավարն ունեցել է հարուստ մարտական անցյալ՝ մասնակցել է 1877–1878 թթ. ռուս-թուրքական, 1904–1905 թթ. ռուս-ձապոնական պատերազմներին, Առաջին համաշխարհային պատերազմի ռուս-թուրքական (Կովկասյան) ռազմաճակատի, 1918 թ. հունվար-հուլիսի թուրք-հայկական, 1918 թ. դեկ-

\*Ընդունվել է տպագրության 30.01.2019:

1 Ավելի մանրամասն տե՛ս **Саакян Р. О.**, Роль генерала Т. Назарбекяна в битве под Дильманом 1915 года (по архивным материалам), ՊԲՀ, 2016, N2, էջ 209–229, **Sahakyan R. O.**, Lieutenant-General Tovmas Nazarbekyan's role in military operations of the Russian army against the Turkish genocidal forces (1914–1916). Dedicated to the 160th birth anniversary of Tovmas Nazarbekyan <http://www.fundamentalarmenology.am/datas/pdfs/270.pdf>:

2 Տե՛ս Армянский корпус против турецких войск (ноябрь 1917 г.–июль 1918 г.). Воспоминания генерала Ф. И. Назарбекова. Составитель: Г. М. Шатирян, специалист Управления, редактор: Г. Аветисян, «Բանբեր Հայաստանի արխիվների», N 3, 1992, էջ 34–153:

տեմբեր-1919 թ. հունվարի վրաց-հայկական, 1918-1920 թթ. հայ-ադրբեջանական, 1920 թ. սեպտեմբեր-նոյեմբերի թուրք-հայկական պատերազմներին: Հայաստանի Հանրապետության տարիներին զբաղեցրել է զինվորական կարևոր պաշտոններ:

Գեներալ Թ. Նազարբեկյանն իր հուշերը գրել է 1926-1928 թվականներին՝ անձնական արխիվում պահպանված զանազան նյութերի, ինչպես նաև մարտական ընկերների՝ գեներալ-լեյտենանտներ Ի. Վ. Հախվերդովի (Հովհաննես Հախվերդյան) և Մ. Բ. Սիլիկովի<sup>3</sup> (Մովսես Սիլիկյան) հետ ունեցած նամակագրական կապի հիման վրա: Նրանք Թ. Նազարբեկյանին զանազան տեղեկություններ ու գնահատականներ են հայտնել 1914-1918 թթ. այս կամ այն մարտական գործողությունների, առանձին զորահրամանատարների և սպաների վերաբերյալ: Գեներալի հուշերի բնագիրը, հրամանները, անձնական նամականին, ինչպես նաև հուշերի սևագրերը պահպանվում են Հայաստանի ազգային արխիվում՝ նրա անձնական ֆոնդում<sup>4</sup>:

Թ. Նազարբեկյանն իր հուշերը գրելու համար կատարել է հսկայածավալ աշխատանք: Ինչպես վկայում են գեներալի անձնական ֆոնդում հայտնաբերված փաստաթղթերը, նա անընդհատ աշխատել է ձեռագրերի վրա. պատրաստել է սևագիր տարբերակը, ապա մաքրագրել առանձին աշակերտական տետրերում: Այս ամենը վկայում է գեներալի բացառիկ աշխատասիրության մասին:

Ինչպես գիտենք՝ Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո գեներալը, հայկական բանակի մյուս սպաների հետ, ձերբակալվել է: Նրան սկզբնապես բանտարկել են Բաքվի, ապա Մոսկվայի տխրահռչակ Բուտիրյան բանտում, որից հետո հայկական բանակի մյուս սպաների հետ Թ. Նազարբեկյանը հայտնվել է Ռյազանի համակենտրոնացման ճամբարում<sup>5</sup>: Այդ ամենի հետևանքով նա վերջնականապես կորցրել է առողջությունը: Վերադարձել է Թիֆլիս, ապրել նյութական ծանր պայմաններում: Խորհրդային իշխանությունները հրաժարվել են թոշակ նշանակել Թ. Նազարբեկյանին անհերթել պատճառաբանությամբ՝ վերջին պատերազմի ժամանակ չի վիրավորվել: Գոյությունը պահպանել է «Մերձավոր Արևելքի օգնության ամերիկյան կոմիտեի» կողմից տրված ուտելիքով: Խորհրդային Վրաստանի իշխանությունների կողմից տրվել է աղքատ լինելու մասին վկայական<sup>6</sup>, սակայն դա արգելք չի հանդիսացել, որպեսզի իշխանությունները քայլեր ձեռնարկեն Թ. Նազարբեկյանին վտարելու իր բնակարանից<sup>7</sup>, քանի որ նա ի գործու չէր վճարելու բնակարանի վարձը:

Թովմաս Նազարբեկյանի բարի անունը վերականգնվեց միայն Հայաստանի վերանակախացումից հետո: Նրա անունով կոչվեց Երևանի թաղամասերից մեկը:

Նախքան իր հուշերի շարադրանքին անցնելը՝ Թ. Նազարբեկյանը ներ-

3 Ավելի մանրամասն տե՛ս Սահակյան Ռ., Գեներալ-լեյտենանտ Մովսես Սիլիկյան (Կենսագրության անհայտ էջեր), ՊԲՀ, 2012, N 2, էջ 63-76, Карапетян М. Л., Генерал-лейтенант Мовсес Силикян (К 150-летию со дня рождения), ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակ. գիտ.», 2012, N 4, էջ 291-294:

4 Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ 45:

5 Թ. Նազարբեկյանի անձնական գործը Ռյազանի համակենտրոնացման ճամբարում տե՛ս <http://stopgulag.org/object/63445518?lc=ru>:

6 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 41, թ. 8:

7 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 45, թ. 1:

կայացնում է ռուս-ձապոնական պատերազմից հետո իրեն բաժին ընկած պաշտոնաթողության մանրամասները: Բանն այն է, որ բարձրագույն հրամանատարությունը համաձայնել էր գործող զինվորականին շնորհել գեներալ-մայորի աստիճան, եթե նա պաշտոնաթող լիներ: Դա վիրավորել էր նրա ինքնասիրությունը, ուստի Թ. Նազարբեկյանը նախընտրել էր գեներալի կոչում ստանալով պաշտոնաթող լինել:

Ցավոք Թ. Նազարբեկյանը որևէ տեղեկություն չի հաղորդում, թե պաշտոնաթող լինելուց հետո ինչով է զբաղվել և իր հուշերի համակարգված շարադրանքը սկսում է 1914 թ. հուլիսից՝ Առաջին համաշխարհային պատերազմի բռնկման օրերից: Մարտական մեծ փորձ ունեցող գեներալը անմիջապես պատրաստականություն էր հայտնել անցնելու զինվորական ծառայության, բայց միայն երկարատև քաշքշուկից հետո՝ 1914 թ. հոկտեմբերի 18-ին նրան հաջողվում է դառնալ Հյուսիսային Պարսկաստանում տեղակայված Կովկասյան 2-րդ հրաձգային բրիգադի ժամանակավոր հրամանատար, որը գործելու էր Ադրբեջանական (Ատրպատականյան) ջոկատի կազմում:

Հուշերի **առաջին տետրում**, որն ընդգրկում է 1914 թ. հուլիսից մինչև 1915 թ. հունվարի 1-ի իրադարձությունները, գեներալն ամենայն մանրամասնությամբ նկարագրում է իր ուղևորությունը դեպի ծառայության վայր՝ Պարսկաստան: Նա հատկապես հետաքրքիր փաստեր է հաղորդում իր ենթակայության տակ գտնվող Հայկական 1-ին կամավորական դրուժինայի հրամանատար, հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչ Անդրանիկի (Օզանյան)<sup>8</sup> ու նույն ստորաբաժանման բժիշկ Յակով Ջավրիևի (Հակոբ Ջավրիյան) մասին: Վերջինիս նկատմամբ գեներալի հարգանքը զգացվում է հատկապես այն փաստից, որ Թ. Նազարբեկյանի հուշերում Հ. Ջավրիյանը միակ անձնավորությունն է, որին հիշատակելիս նա նշում է անունը, հայրանունը և ազգանունը՝ ամբողջությամբ:

Հուշերում զգալի տեղ է հատկացված հայ կամավորական շարժմանը, դրա հրամանատարներին՝ Անդրանիկին, Դրոյին (Դրաստամատ Կանայան), Համազասպին (Սրվանձտյանց) ու Քեռուն (Արշակ Գավաֆյան)՝ նրանց անվանելով «սիրված ժողովրդական առաջնորդներ»:

Հյուսիսային Պարսկաստանում թուրք-քրդական ուժերի դեմ գործող Ադրբեջանական (անվանումը ստացել է իրանական Ատրպատականի աղավաղված անունից) ջոկատի առաջին մարտը մղում է Թ. Նազարբեկյանի հրամանատարության ներքո գտնվող Հայկական 1-ին կամավորական դրուժինան կամ խումբը: Գեներալը ցավով փաստում է, որ կամավորների մեծ մասի մոտ բացակայում էին ձմեռային հագուստը և երկարաճիտ կոշիկները. չնայած դրան կամավորները երկու օր շարունակ, առանց ռուսական օժանդակության, կռվում էին հակառակորդի դեմ:

Բրիգադի զորամասերի հարձակումը կատարվում էր կլիմայական ծանր պայմաններում, որին ավելանում էին ճանապարհների գրեթե բացակայությունը և լեռնային դժվարամատչելի տեղանքը: Մինչ Թ. Նազարբեկյանն

8 Անդրանիկի և Թ. Նազարբեկյանի հարաբերությունների մասին ավելի մանրամասն տե՛ս Սահակյան Ռ., Անխուսափելին. Անդրանիկ Օզանյան և Թովմաս Նազարբեկյան. գուգակշիռներ, «ՎԷՄ», 2017, N 2, ապրիլ-հունիս, էջ 214-229:

իր շտաբի պետի հետ կազմում էր Կոթուրի կիրճը գրոհելու պլանը, Անդրանիկը, նոյեմբերի 15-ին, սեփական նախաձեռնությամբ անցնում է հարձակման, ինչի շնորհիվ ռուսական ստորաբաժանումները գրավում են կիրճը, ապա Կոթուր քաղաքը:

Շարապյանն գյուղը գրավելուց հետո Թ. Նազարբեկյանին են հանձնվում համիդեական գնդի երկու քուրդ և մեկ եզդի (Ջհանգիր աղա) հրամանատարներ: Նրանք պարտավորվում են հանձնել նաև իրենց ցեղակիցների մոտ գտնվող մարտական զենքը:

Ադրբեջանական ջոկատի առաջխաղացումն այնքան հաջող էր ընթանում, որ գեներալ Ֆ. Չեռնոզուբովը կարգադրում է Թ. Նազարբեկյանին Անդրանիկի համաձայնության դեպքում նրան տրամադրել երկու լեռնային թնդանոթներ Վան արշավելու համար: Առաջարկը բավականին գրավիչ էր, սակայն մեծ վտանգ էր պարունակում: Անհասկանալի էր, թե ինչպես էր գործելու խումբը՝ կտրված լինելով մատակարարումից ու շրջապատված թշնամաբար տրամադրված քրդական բնակչությամբ: Սակայն իրավիճակի կտրուկ փոփոխման հետևանքով հնարավոր չի լինում իրականացնել մտահղացումը, քանի որ թուրքերը սկսել էին ուժեղացնել ճնշումը գրեթե ողջ ռազմաձևակատի երկայնքով: Պարզվեց, որ հակառակորդը թույլ էր տվել ռուսական գործառնասերին խորանալ իրենց տարածքում, որպեսզի անցնեն լայնածավալ հակահարձակման՝ նպատակ ունենալով Սարիղամիշ քաղաքի շրջակայքում ջախջախել Կովկասյան 4-րդ բանակային կորպուսը և ներխուժել Կովկաս: Այդ ծրագրի մասն էին կազմում Հյուսիսային Պարսկաստանում թուրք-քրդական ուժերի զգալի ակտիվացումը և հարձակողական գործողությունների ձեռնարկումը: Հետախուզությունից և Անդրանիկից տեղեկանալով թշնամական զգալի ուժերի կուտակման մասին՝ գեներալ Թ. Նազարբեկյանը նոյեմբերի 30-ին որոշում է նահանջել: Նա հայ կամավորներին կարգադրում է ստանձնել գումակի պաշտպանությունը:

Ճիշտ է, նահանջը բարոյահոգեբանական ծանր ազդեցություն է ունենում հայ կամավորների վրա, սակայն նրանք շարունակում են ակտիվորեն մասնակցել մարտական գործողություններին: Դեկտեմբերի 20-ին գեներալը ստանում է հեռագիր, որով տեղեկացվում էր Սարիղամիշի շրջանում ընթացող մարտերի մասին և հրամայվում էր շարունակել նահանջը: Սակայն մի քանի օր անց հայտնի է դառնում, որ թուրքերը ջախջախիչ պարտություն են կրել: Լուրը ոգևորում է բոլորին, դեկտեմբերի 23-ին փոխարքայի զինվորական օգնական գեներալ Ալ. Միշլանսկին հրամայում է նահանջել Խոյ, ապա՝ Ջուլֆա:

**Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ Ադրբեջանական ջոկատի նահանջը հիմնավորված չէր որևէ ռազմավարական կամ մարտավարական անհրաժեշտությամբ:**

Թ. Նազարբեկյանը սրտի կսկիծով է նկարագրում, թե ինչպիսի դժոխային պայմաններում էր հայտնվել հայ և ասորի բնակչությունը: Նրա խոստովանությամբ, շատ զինվորականների աչքերին արցունքներ էին հայտնվում, երբ նրանք ականատես էին լինում փախստականների՝ հատկապես կանանց, երեխաների ու ծերերի անասելի տանջանքներին: Զինվորներն ու կազակները իրենց ուժերի ներածի չափով օգնում էին դժբախտներին:

Դեկտեմբերի 27-ին Թ. Նազարբեկյանի խորհրդով Հ. Զավրիևը հեռագրում է փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովին՝ խնդրելով ժամանակավորապես դադարեցնել գորքի նահանջը, որպեսզի նրա պաշտպանության ներքո գտնվող բնակչությունը հնարավորություն ունենա հասնելու Զուլֆա (Հին Զուղա): Նույն օրը ստացված հեռագրով փոխարքան հրամայում է դադարեցնել նահանջը և չթողնել ք. Խոյը, իսկ Թ. Նազարբեկյանը հրաման է ստանում վերադառնալ Խոյ:

Հուլերի առաջին մասի վերջում Թ. Նազարբեկյանը վերլուծում է մարտական գործողությունների առաջին փուլը՝ եզրակացնելով, որ ռուսական Գլխավոր շտաբի մշակած մարտական պլանն այնքան էլ արդյունավետ ու խոր մտածված չէր: Նա գտնում է, որ չէր կարելի թերագնահատել հակառակորդի հնարավորությունները, ուստի նրա տարածքում խորանալիս անհրաժեշտ էր ամրացնել թիկունքը, ապա նոր միայն առաջանալ, այլ ոչ թե անիմաստ նահանջել ու կործանման եզրին հասցնել քրիստոնյա բնակչությանը:

Թեև Հայաստանի ազգային արխիվում պահվող գեներալ Թովմաս Նազարբեկյանի հուշերում առկա որոշ տեղեկություններ ժամանակին օգտագործվել են առանձին հեղինակների կողմից, բայց նրա հայերեն թարգմանությունը տպագրվում է առաջին անգամ, առանց կրճատումների: Մեր միջամտությունները կատարվել են ուղղագիծ փակագծերով: Հուլերի տողատակի ծանոթագրությունները մերն են:

Ռուբեն Օ. Սահակյան  
*Պատմ. գիտ. դոկտոր*

**ՏԵՏՐ 1**  
**ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ ՖՈՐՄԱ ՆԱԶԱՐԲԵԿՅԱՆԻ ՀՈՒՇԵՐԸ**  
**(1914 թ. հուլիսից մինչև 1915 թ. հունվարի 1-ը)**

ԱՐՄԻՎ

1 ապրիլի 1928 թ.  
Թիֆլիս

Ցավոք իմ օրագիրը և տարբեր նշումները, որոնք ես մանրակրկիտ հավաքում էի վերջին պատերազմի ժամանակ՝ 1914-ից մինչև 1920 թ. ներառյալ, երբ ես հանդիսանում էի Կովկասյան 2-րդ հրաձգային՝ բրիգադի, իսկ հետո Կովկասյան 2-րդ հրաձգային դիվիզիայի, Հայկական կորպուսի և վերջապես հայկական զորքերի հրամանատար՝ ոչնչացվել են: Դրանք [փաստաթղթերը] պահպանվում էին Երևան քաղաքի իմ բնակարանում (Աստաֆյան փողոց), սույն N 90, Արտեմ Ավետովի տանը): 1921 թ. հունվարի 24-ին ինձ Բաքու քաղաքից հետո դրանք [օրագիրը և գրառումները] անհայտ անձի կողմից ոչնչացվել են (սակայն ենթադրում եմ, որ ամենից հավանական է իմ տանտիրոջ ընտանիքի կողմից): Որոշ թղթեր նույնիսկ հայտնվեցին Թիֆլիսի կրպակներում: Դրանցից մեկը (գեներալ Օգանովսկու<sup>9</sup> նամակը) 1921 թ. ինձ բերեց Գ. Պ. Մելիք-Կարակոզովը<sup>10</sup>: Ուստի, ձեռնամուխ լինելով իմ հուշերի կազմմանը, ես հիմնականում օգտագործել եմ իմ հիշողությունը, որոշ անձանց՝ իմ նախկին ենթակայների ծառայակիցների հարցումներով, ինչպես նաև այն աղբատիկ նշումները, որոնք կային ինձ մոտ Թիֆլիսում:

1907 թ. մայիսից ես պաշտոնաթող էի եղել և բնակվում էի Թիֆլիսում: Պաշտոնաթող եղա ուժերի ծաղկման շրջանում: Պաշտոնաթող լինել ինձ ստիպեցին երկու հանգամանք՝ առաջինը ես ինձ վիրավորված էի համարում ճապոնական պատերազմի<sup>11</sup> համար: 1904-1906 թթ. ընթացքում զինվորական ծառայության համար ես բազմիցս ներկայացվել եմ գեներալի [կոչման] համար, սակայն այդ ներկայացումները մերժվում էին սկզբնապես գնդապետի աստիճանում կարճաժամկետ գտնվելու համար (1902 թ.), իսկ պատերազմի ավարտից հետո այդ աստիճանը չափից շատ [շուտ] շնորհելու պատճառով: Իմիջիայրոց, հենց այդ ժամանակ իմ հասակակիցները խաղաղ պայմաններում ստացան գեներալի աստիճան (Սևաստոպոլում Բրեստյան գնդի հրամանատար, գնդապետ Դումբաձեն<sup>12</sup> և Թիֆլիսյան 15-րդ գրենադերական<sup>13</sup> գնդի հրամանատար Գավրիլովը<sup>14</sup> Գուրիայի<sup>15</sup> համար):

Լաջորդն այն էր, որ 1906 և 1907 թթ. զորամասի հրամանատարի ձակատագիրը կախված էր նահանգային ժանդարմական շտաբ-սպայի<sup>16</sup> կարծիքից: 1906 թ. ճապոնական պատերազմից հետո՝ օգոստոս ամսին ես նշանակվեցի Օլոնեցկյան

ԺԱ (ԺԷ) փաթիլ, թիվ 1 (65), հունվար-մայր, 2019

ՎԿՎ համահայկական հանդես

9 **Օգանովսկի Պյոտր Իվանի** (1851-1917), հեծելազորի գեներալ, 1915 թ. հունվարից մինչև դեկտեմբեր Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի հրամանատար: Բարեկամաբար էր տրամադրված հայերի նկատմամբ: Ենթադրվում է, որ դրա պատճառներից մեկը որդին էր՝ Նիկոլայը (1874-1938), մասնագիտությամբ գյուղատնտես, Սոցիալիստ-հեղափոխականների (էսէր) կուսակցության անդամ և սերտ հարաբերություններ ուներ ՀՅԴ-ի հետ: Խորհրդային տարիներին ենթարկվել է քաղաքական բռնաճնշումների:

10 **Մելիք Արաբոյոյան Գևորգ Պավելի** (1873-1940), հասարակական, քաղական և պետական գործիչ, կադետ, իսկ 1918 թ.՝ Հայ ժողովրդական կուսակցության անդամ, արտաքին գործերի նախարարի տեղակալ, 1918-1919 թթ. ՀՀ լուսավորության նախարար, Երևանի պետական համալսարանի հիմնադիրներից: Խորհրդային տարիներին զբաղվել է մանկավարժությամբ:

11 Նկատի ունի 1904-1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմը:

12 **Դումբաձե Իվան Աստուխի** (1851-1916), գեներալ-մայոր, 16-րդ հրաձգային գնդի, ապա 2-րդ բրիգադի 34-րդ դիվիզիայի հրամանատար, ծայրահեղ միապետական: Յալթայի քաղաքապետ՝ նահանգապետի իրավունքներով: Ցարական շքախմբի անդամ:

13 Գրենադյոր (ֆր. Grenadier) հետևակային կամ հեծելազորային առավել մարտունակ և նախապատրաստված ստորաբաժանման անվանումը, որը նախատեսված էր հակառակորդի ամրությունները գրոհելու համար: Անվանումը ստացել է սպառազինության մեջ ունեցած ձեռքի նռնակներից՝ գրենադերներից:

14 **Գավրիլով Նիկոլայ Իվանի** (1857-1917-ից հետո), գեներալ-լեյտենանտ (1914): Առաջին աշխարհամարտի մասնակից, 79-րդ հետևակային դիվիզիայի հրամանատար (1914-1917):

15 Նկատի ունի Գուրիայում (Վրաստան) 1905-1906 թթ. ժողովրդական ապստամբության ճնշումը:

16 Սպայական բարձր կոչում:

14-րդ հետևակային գնդի հրամանատար: Գունդը տեղակայված էր Լոմժ քաղաքում: Գնդի զորանոցները (սեփական զորամասեր) գտնվում էին քաղաքից 1-2 վերստ հեռավորության վրա: Այդտեղ էր նաև տեղակայված Վոլինսկյան դրագունյան<sup>17</sup> գունդը: Չեմ հիշում 1907 թ. փետրվարին կամ մարտի սկզբին էր, երբ ես ներկա էի գնդի շարային պարապմունքներին, եկավ 6-րդ բանակային կորպուսի հրամանատար, հրետանու գեներալ Խիտրովոյի<sup>18</sup> (նա միաժամանակ գեներալ-նահանգապետն էր՝ առեղծի լիազորություններով) հանձնակատարը ու հաղորդեց նրա հրամանը՝ ժամանել նրա բնակարան: Ես անմիջապես մեկնեցի:

Նրա տանը հանդիպեցի 4-րդ հետևակային դիվիզիայի պետ<sup>19</sup>, գեներալ-լեյտենանտ Ֆյոդորովի<sup>20</sup>: Կորպուսի հրամանատարն ինձ դիմեց հետևյալ խոսքերով. «Ձեր գնդում հեղափոխական մեծ քարոզչություն է ընթանում, սպաները գրեթե պարապմունքների չեն գնում, իսկ գիշերները նույնիսկ վախենում են երևալ զորանոցներում»: Դրան ես պատասխանեցի, որ ես անձամբ, ամեն օր, առավոտյան ժամը 8-ից մինչև ցերեկվա ժամը 12-ը գտնվում եմ զորանոցներում և ղեկավարում եմ սպաների պարապմունքները, ապա [ժամը] 12-ին գնում եմ գրասենյակ, որտեղ աշխատում եմ մինչև ժամը 3-ը, իսկ երեկոյան՝ ժամը 6-ից մինչև 10-ը: Ամեն օր վաշտի հրամանատարներից մեկը հերթով գիշերները այցելում է իր գումարտակները, գնդի հերթապահի սենյակում գտնվող գումարտակային գրքում անց է կացնում իր դիտողությունները, իսկ շտաբ-սպաները [յուրաքանչյուր շաբաթվա] հինգերորդ օրը գիշերները ստուգում են գունդը և իրենց դիտողությունները անցկացնում [գումարտակային] գրքում, [իսկ] ես, անձամբ, ամիսը երկու-երեք անգամ նույնն եմ անում: Ես անձամբ և գնդի բոլոր հրամանատարներն այնքան մոտիկ ենք զինվորներին, ուստի հեղափոխական քարոզչությունը չէր կարող աննկատ մնալ մեզնից, իհարկե, բացառիկ դեպքի մասին ես չեմ կարող երաշխավորել: Եթե ցանկանում եք, ապա ես կարող եմ ներկայացնել գրքերը:

Այն ժամանակ նա ինձ հարցրեց. «Հայտնի է արդյոք ինձ, որ իմ գնդում զինվորական ժողովի ժամանակ կայսրի<sup>21</sup> կախված դիմանկարը ծակվել է սվինով»: Ես նրան զեկուցեցի, որ այդ դեպքն ինձ լավ հայտնի է և այդ փաստի մասին սխալ է զեկուցվել: Դեպքը հետևյալ կերպ է տեղի ունեցել: Այդ մասին ինձ զեկուցել է գնդի հերթապահ սպան, երբ ես եկել էի զորանոցներ: Ես անմիջապես գնացի զինվորական ժողովավայր ու անձամբ հետաքննեցի այդ դեպքը: Պարզվեց, որ [Նիկոլայ II-ի] դիմանկարը կախված էր բարակ թելից, որը կտրվել էր և դիմանկարը ընկել էր աթոռի թիկնակի սուր անկյան վրա և թուղթը պատռվել էր: Այդ հետաքննությունից հետո ես անհրաժեշտ չհամարեցի այդ մասին զեկուցել: Դրանից հետո ես նրանից խնդրեցի, որպեսզի թույլատրի զեկուցել այդ [դեպքերի] ոչ ճիշտ լուսաբանման պատճառի մասին: Բանն այն է, որ Լոմժ գալով ես չայցելեցի նահանգային ժանդարմական շտաբ-սպային: Նա ուրիշների միջոցով մեկ անգամ չէ, որ ակնարկել էր այդ մասին, ես էլ ասել էի, որ հարմար առիթի դեպքում կծանոթանամ նրա և կնոջ հետ ու այդ ժամանակ էլ կայցելեմ:

Կորպուսի հրամանատարն ինձ թույլատրեց հեռանալ: Ես դուրս եկա դիվիզիայի պետի հետ: Նրան առաջարկեցի հասցնել մինչև շտաբ: Եվ երբ մենք գնում էինք, ես նրան ասացի, որպեսզի ինձ ապահովեմ նման միջադեպերից հենց այսօր նրան կուղարկեմ ընտանեկան պատճառով պաշտոնաթող լինելու մասին զեկուցագիր: Դրան դիվիզիայի պետը ոչինչ չասաց: Նա ինքը տարիքի պատճառով պետք է պաշ-

17 Հեծելազորային ստորաբաժանման անվանումը (ֆր.՝ dragon - հրեշ): Դրագունները, ի տարբերություն այլ հեծելազորային ստորաբաժանումների, անհրաժեշտության դեպքում կարող էին կռվել նաև հետևակ:

18 **Խիտրովո Կիկոլայ Միխայիլի** (1844-1909), հրետանու գեներալ, 6-րդ բանակային կորպուսի հրամանատար:

19 Դիվիզիայի պետը դիվիզիայի հրամանատարից ավելի մեծ լիազորություններ ուներ և ենթարկվում էր միայն բարձրագույն հրամանատարությանը:

20 **Ֆյոդորով Ալեքսեյ Վասիլի**, գեներալ-լեյտենանտ, 1903-1907 թթ. 4-րդ հետևակային դիվիզիայի հրամանատար:

21 **Նիկոլայ II Ռոմանով** (1868-1918), Ռուսաստանի վերջին կայսրը (1894-1917):

տոնաթող լինելը: Կորպուսի հրամանատարը շատ ափսոսաց իմ հեռանալու համար և դա միշտ հայտնում էր ինձ ու մյուսներին: Նա ասում էր. «Ասես իմ առողջ ատամը հեռացրին»:

Քանի որ ես սովոր էի աշխատել, դժվար էր առանց աշխատանքի, չնայած իմ թոշակն ինձ բավարարում էր, ես այնուամենայնիվ որևէ աշխատանք էի փնտրում: Դիմում էի տարբեր հասարակական կազմակերպությունների, սակայն ամենուրեք մերժում էի ստանում՝ պատճառաբանում էին իմ լավ թոշակը ու գեներալական աստիճանը:

Եկավ 1914 թ.: Սարևոյի միջադեպը<sup>22</sup> ավելոծեց ողջ Եվրոպան: Լավ չեմ հիշում, հուլիսի 15-ին կամ հուլիսի 16-ին ես [Թիֆլիսի] Երևանյան հրապարակում<sup>23</sup> հանդիպեցի ավտոմեքենայից դուրս ելնող Կովկասյան 1-ին բանակային կորպուսի հրամանատար, գեներալ Բերխմանին<sup>24</sup>, նրա շտաբի պետ գեներալ Վերխովսկուն<sup>25</sup>, Կովկասյան գրենադերական դիվիզիայի պետ, գեներալ Շատիլովին<sup>26</sup> և հրետանու պետ գեներալ Չեկալիսին<sup>27</sup>: Ես մոտեցա նրանց, բարևեցի ու մի քանի հարցով դիմեցի Բերխմանին: Նա մի տեսակ չցանկանալով ինձ պատասխանեց, որն ինձ զարմացրեց: Այդ ժամանակ Շատիլովն ինձ մի կողմ տարավ և ասաց, որ հայտարարված է զորահավաք: Չնայած դրան, ես այնուամենայնիվ հակված էի, որ հավանաբար պատերազմ չի լինի և ամեն ինչ կհարթվի դիվանագիտական ճանապարհով: Չեմ որ յուրաքանչյուրը գիտեր, թե ինչ ահռելի պատասխանատվություն է վերցնում իր վրա պատերազմ հայտարարողը: Սակայն, երևում է, որ Գերմանիան նախապատրաստվել էր այդ պատերազմին և հաշվի էր առել իր ուժերը և պատրաստվածությունը: Ռուսաստանը դեռևս պատրաստ չէր: Մեր վերագլխումը պետք է ավարտվեր 1916 թ.: Գերմանիան համոզված էր, որ իր տեխնիկայով անկասկած հաջողություն կունենա: Նա, սակայն, մոռացել էր Բիսմարկի<sup>28</sup> պատգամները: Բավական չէր միայն ռազմական տեսակետից պատրաստ լինել, հաջողության համար պետք էր նախապատրաստել նաև քաղաքական իրադրությունը և խուսափել Ռուսաստանի հետ պատերազմելուց: Չգիտես թե ինչու նա [Գերմանիան] համոզված էր, որ Անգլիան չէզոք կմնա, իսկ Միացյալ Նահանգներին<sup>29</sup> մասին հավանաբար ընդհանրապես չէր էլ մտածում, որ նրանք կարող են գործուն մասնակցություն ունենալ:

Նույնիսի 18-ին, ցերեկվա մոտ ժամը 12-ին, գալով Երևանյան հրապարակ ես ապշած մնացի մարդկային ահռելի կուտակումից: Առաջին իսկ հանդիպածին հարցրեցի բազմամարդության պատճառը: Նա պատասխանեց, որ ժամերգություն է կատարվում Գերմանիային պատերազմ հայտարարելու առթիվ: Ստացվեց, որ ես խիստ սխալվել էի ենթադրություններում:

Բնակիչների տրամադրությունը շատ բարձր էր: 1877<sup>30</sup> և 1904<sup>31</sup> թթ. պատե-

22 Նկատի ունի 1914 թ. հունիսի 28-ին Սարևոյում սերբ հայրենասեր Գավրիլո Պրինցիպի կողմից ավստրո-հունգարական գահաժառանգ Ֆրանց Ֆերդինանդի սպանությունը, որն առիթ հանդիսացավ սկսելու Առաջին համաշխարհային պատերազմը:

23 1827 թ. Թիֆլիսի կենտրոնական հրապարակը գեներալ Ի. Պասկևիչի կողմից Երևանի բերդի գրավման կապակցությամբ կոչվել է Երիվանյան (այժմ՝ Ազատության հրապարակ):

24 **Բերխման Գեորգի Էդուարդի** (1854-1929), հեծելազորի գեներալ: 1877-1878 թթ. ռուս-թուրքական և Առաջին համաշխարհային պատերազմների մասնակից: 1914 թ. հունվարի 2-ից՝ Կովկասյան 2-րդ, իսկ դեկտեմբերի 14-ից մինչև 1915 թ. փետրվարի 5-ը Կովկասյան 1-ին բանակային կորպուսի հրամանատար:

25 **Վերխովսկի Սերգեյ Իվանի** (1865-1919), գեներալ-մայոր, Կովկասյան 1-ին բանակային կորպուսի շտաբի պետ:

26 **Շատիլով Վլադիմիր Պավելի** (1855-1929), գեներալ-մայոր, 1913 թ. մայիսի 1-ից մինչև 1915 թ. հունիսի 8-ը Կովկասյան գրենադերական դիվիզիայի հրամանատար:

27 **Չեկալիս Վլադիմիր Նիկոլայի** (1853-??), գեներալ-լեյտենանտ, 1910 թ. հուլիսի 5-ից մինչև 1917 թ. մարտի 27-ը Կովկասյան 2-րդ բանակային կորպուսի հրետանու տեսուչ:

28 **Բիսմարկ Օտտո Ֆոն** (1815-1898), պրուսական, ապա գերմանական պետական ու քաղաքական գործիչ, Գերմանական կայսրության առաջին կանցլեր: Իր քաղաքական կտակում զգուշացրել էր հայրենակիցներին խուսափել Ռուսաստանի հետ պատերազմելուց:

29 ԱՄՆ-ն պատերազմի մեջ մտավ 1917 թ. ապրիլի 6-ին:

30 Նկատի ունի 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը:

31 Նկատի ունի 1904-1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմը:



րագմների ականատես լինելով ես նման բան չէի տեսել: Ամենուրեք տեղի էին ունենում բնակչության տարբեր շերտերի ցույցեր: Նրանք հանդիսավոր կերպով անցնում էին փոխարքայի<sup>32</sup> պալատի առջևով և պատրաստակամություն էին հայտնում ամեն ինչ անել մեզ պարտադրված պատերազմում հաջողության հասնելու համար: Բնականաբար ես էլ ցանկություն ունեցա օգտակար լինել այդ պատերազմում:

Հուլիսի 19-ին Սուրյակի և Երևանյան հրապարակի անկյունում ես հանդիպեցի Կովկասյան ռազմական օկրուգի հերթապահ գեներալ<sup>33</sup> Վեսելովզորովին<sup>34</sup>, բարևեցի ու խնդրեցի նկատի առնել ինձ, եթե ծառայության ընդունեն պաշտոնաթողներին: Նա խոստացավ, քանի որ լավ գիտեր իմ նախկին ծառայությունը:

Օգոստոսին Գերլագույն] գլխավոր] հրամանատարը<sup>35</sup> պահանջեց Արևմտյան ռազմաձևատ ուղարկել զորակոչված Կովկասյան 2-րդ և 3-րդ [բանակային] կորպուսները: 2-րդ [բանակային] կորպուսի որոշ զորամասեր, ինչպես օրինակ Երևանյան<sup>36</sup> և Վրացական<sup>37</sup> գնդերն անցան Թիֆլիսով: Նրանց Թիֆլիս ժամանելիս գնացի այցելելու ու հրաժեշտ տալու իմ նախկին ծառայակիցներին ու ընկերներին: Այստեղ ես տեղեկացա, որ հույս կա նրանց թողնել Կովկասում: Պարզվեց, որ փոխարքան հեռագիր է ուղարկել Գերլագույն] [գլխավոր] հրամանատարին, որտեղ խնդրում էր այդ կորպուսները թողնել տեղում, քանի որ գտնում էր, որ իր մոտ ունեցած ուժերը բավարար չեն Թուրքիայի դեմ պատերազմելու դեպքում: Ցավոք ստացվեց մերժողական պատասխան, ցուցումով, որ պատերազմի ձակատագիրը լուծվելու է Արևմուտքում, այլ ոչ թե Կովկասում: Իհարկե, պատերազմի բախտը, պատերազմի ձակատագիրը որոշվում էր Արևմուտքում, սակայն որքան էր նա [Նիկոլայ Կրտսերը] թերագնահատել Կովկասյան ձակատը՝ երևաց նրա հետագա կարգադրություններից, երբ նա նշանակվեց Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար: Այդ բանակի ուժերը նրա օրոք ավելացան 4 [բանակային] կորպուսներով: Նպատակահարմար կլիներ Կովկասում թողնել այն կորպուսները, որոնք ծանոթ էին Կովկասյան ռազմաձևատի հետ և վարժեցվել էին լեռնային պատերազմի [մարտական] գործողություններին, բացի այս, այդ երկու կորպուսներում կային [18]77-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի մասնակիցներ:

Անցան հուլիսը, օգոստոսը և սեպտեմբերը: Սկսվեց հոկտեմբերը: Ես տեղյակ էի, որ իմ որոշ ծառայակիցներ արդեն ընդունվել են ծառայության: Ինձ զարմացնում էր գեներալ Վեսելովզորովի լռությունը:

Հոկտեմբերի սկզբին Երևանից 66-րդ հետևակային] դիվիզիայի շտաբի պետ, գնդապետ Լերեդիսկին<sup>38</sup> ինձ հայտնեց, որ իրենց դիվիզիայում դիվիզիայի պետի օգնականի<sup>39</sup> թափուր տեղ կա և խորհուրդ տվեց խնդրել այդ տեղը [պաշտոնը]: Վերջապես հոկտեմբերի 15-ին ես գնացի օկրուգային շտաբ՝ ծառայության անցնելու խնդրանքով: Այնտեղ, շտաբ մտնելիս, հանդիպեցի հերթապահ գեներալ Վեսելովզորովին, որին ես խնդրեցի օգնել ծառայության անցնելու համար:

32 Նկատի ունի Կովկասի փոխարքա (1905-1915), կոնս, հեծելազորի գեներալ Իլյարիոն Իվանի Վորոնցով-Դաշկովին (1837-1916):

33 Հերթապահ գեներալը ղեկավարում էր բանակի դատական, սանիտարական և տեսչական ծառայությունները, ինչպես նաև զորքի թվաքանակի և անձնակազմի գործավարությունը:

34 Վեսելովզորով Բորիս Պյոտրի (1869-1944), գեներալ-մայոր: 1914 թ. նոյեմբերի 8-ից մինչև 1916 թ. սեպտեմբերի 25-ը Կովկասյան բանակի հերթապահ գեներալ:

35 Ռոմանով Նիկոլայ Նիկոլայի (Կրտսեր, 1856-1929), մեծ իշխան, հեծելազորի գեներալ, 1914-1915 թթ. Ռուսական կայսրության ցամաքային ու ծովային ուժերի Գերագույն գլխավոր հրամանատար: 1915 թ. օգոստոսի 23-ից մինչև 1917 թ. մարտ Կովկասի փոխարքա ու Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար:

36 Լրիվ անվանումն է՝ Էրիվանյան (Երևանյան) 13-րդ լեյբ-գվարդիական ցար Միխայիլ Ֆյոդորովիչի գունդ (1642-1918): Ռուսական կայսրության բանակի ամենահին և առավել տիտղոսակիր զորամասերից է:

37 Լրիվ անվանումն է՝ 14-րդ գրենադերական թագաժառանգի ժառանգորդի Վրացական գունդ (1700-1917):

38 Լերեդիսկի Եվգենի Վասիլի (1873-?), գեներալ-մայոր, Կովկասյան ռազմաձևատի հրամանատար (1917 թ. դեկտեմբեր-1918 թ. մայիս):

39 Տեղակալ:

Հիշեցրեցի նրա խոստումը և նշեցի, որ 66-րդ դիվիզիայում կա թափուր պաշտոն: Նա ինձ խիստ չոր ընդունեց ու կտրուկ ասաց, որ 66-րդ դիվիզիայում որևէ թափուր տեղ չկա, իսկ եթե ցանկանում եմ ծառայության ընդունվել, ապա պետք է մեկնեմ գավառական քաղաք Մինսկ, որտեղ կազմակերպվել է գեներալների պահեստագոր:

Նման վերաբերմունքն ինձ խիստ ապշեցրեց, առավել ևս, որ մենք լավ հարաբերություններ ունեինք: Ես սա կարող էի վերագրել նրա՝ հայերի նկատմամբ ունեցած անբարյացակամությանը: Ես ցանկանում էի ծառայել Կովկասյան ռազմաճակատում որպես [18]77 թվականի պատերազմի մասնակից, ծանոթ էի այդ ռազմաճակատին: Ընկձված ես հեռացա նրանից և որոշ ժամանակ անց տեսնելով հերթապահ սպային, մոտեցա ու հարցրեցի, թե երբ է գալու շտաբի պետ, գեներալ Յուդենիչը<sup>40</sup>: Նա ինձ հայտնեց, որ որ նա գեկույցի է գնացել փոխարքայի մոտ և շուտով կլինի: Ես որոշեցի նրան սպասել: Եվ իսկապես, մի քանի րոպե անց տեսա աստիճաններով բարձրացող գեն[երալ] Յուդենիչին: Ես մոտեցա նրան ծառայության անցնելու խնդրանքով: Նա ինձ ասաց, որպեսզի ես անմիջապես ներկայացնեմ գեկուցագիր և ինքս էլ հանձնեմ: Ես գրեցի, սակայն չցանկանալով նրան անհանգստացնել գեկուցագիրը ուղարկեցի հերթապահ սպայի հետ և ինքս սկսեցի սպասել նրա վերադարձին: Այդ նույն ժամանակ [սենյակից] դուրս եկավ գեն[երալ] Վեսելովզորովը ու սկսեց փնտրել հերթապահ սպային: Ես նրան ասացի, որ իմ գեկուցագրի հետ ուղարկել եմ շտաբի պետի մոտ և հայտնեցի, թե գործը ինչու է: Նա անմիջապես գնաց շտաբի պետի մոտ և մի քանի րոպե անց ժպտալով դուրս եկավ նրա մոտից ու մոտենալով ինձ շնորհավորեց 66-րդ հետևակային] դիվիզիայի պետի օգնական նշանակվելու առթիվ: Խնդրեց անցնել մի քանի օր հետո ստանալու համար ճանապարհավարձը և գրավոր հրամանները:

Շտաբից տուն վերադարձա, որտեղ իմ մարդը [ծառան] գեկուցեց, որ իմ բացակայության ընթացքում եկել էր գեներալ Վոլսկին<sup>41</sup> և խնդրել, որպեսզի իրեն սպասեմ, քանի որ որոշ ժամանակ անց նա կրկին կայցելի կարևոր գործով: Որոշ ժամանակ անց նա եկավ ու առաջարկեց ինձ զբաղեցնել իր կողմից կազմավորվող Կովկասյան] 4-րդ հետևակային] դիվիզիայում իր օգնականի պաշտոնը: Ես նրան բացատրեցի, որ արդեն նշանակում եմ ստացել 66-րդ հետևակային] դիվիզիայում, որին նա պատասխանեց, որ ինքը գրույց է ունեցել գեն[երալ] Միշլանսկու<sup>42</sup> հետ և նա տվել է իր համաձայնությունը: Ես իհարկե ուրախությամբ համաձայնվեցի այդ առաջարկությանը, քանի որ մենք բարեկամական հարաբերություններ ունեինք, և նախկինում նա իմ ենթական է եղել Երևանյան գնդում, որտեղ նա 1-ին վաշտի հրամանատարն էր: Գեներալ Վոլսկին խնդրեց հաջորդ օրը ժամը 10-ին անցնել իր մոտ, որից հետո մենք կներկայանանք փոխարքային ու գեն[երալ] Միշլանսկուն, ապա կգնանք դիվիզիայի] շտաբի համար շինություն ընտրելու:

Լաջորդ օրը՝ այսինքն հոկտեմբերի 16-ին, ես գնացի նրա բնակարանը: Պարզվեց, որ գիշերվա ընթացքում ստացվել է նոր կարգադրություն՝ գեն[երալ] Վոլսկին նշանակվում է 66-րդ հետևակային] դիվիզիայի պետ, իսկ ես նրա օգնական, ու մենք [հոկտեմբերի] 18-ին պետք է ներկայանանք ղեկավարությանը:

Հոկտեմբերի 18-ին ես կրկին գնացի նրա մոտ, ցավոք հետևել էր նոր կարգադրություն: Քանի որ մենք Թուրքիային պատերազմ էինք հայտարարել<sup>43</sup>, և որի

40 Յուդենիչ Նիկոլայ Նիկոլայի (1862–1933), ռուս ռազմական գործիչ, հետևագորի գեներալ, Կովկասյան բանակի շտաբի պետ (1913–1915), ապա հրամանատար (1915 թ. հունվար–1917 թ. մայիսի 2): Նրա հրամանատարությամբ Կովկասյան բանակը փայլուն հաղթանակներ տարավ ռուս-թուրքական ռազմաճակատում:

41 Վոլսկի Միգիզովուդ Վիկտորի (1852–??), հետևագորի գեներալ, Կարսի (1908), Դադուտանի (1908–1914) մարզերի զինվորական նահանգապետ, Կովկասյան ռազմական օկրուգի գլխավոր պետ (1915–1917):

42 Միշլանսկի Ալեքսանդր Ջախարի (1856–1920), ռուս ռազմական գործիչ, ռազմական պատմաբան, հետևագորի գեներալ: 1913 թ. դեկտեմբերից մինչև 1915 թ. մարտ Կովկասի փոխարքայի ռազմական գծով օգնական:

43 Ռուսական կայսրությունը Օսմանյան կայսրությանը պաշտոնապես պատերազմ է հայտարարել 1914 թ. հոկտեմբերի 19-ին ի պատասխան գերմանա-թուրքական ռազմածովային նավատորմի հարձակման:

հետևանքով Դադստանի մարզում սպասվում էին խռովություններ, ուստի գեն[երալ] Վոլսկին պետք է մեկնեի այնտեղ, որպես նախկին գեներալ-նահանգապետ, իսկ ես պետք է գնայի ք. Երևան: Այս օրինակից կարելի է ենթադրել, որ շտաբում ինչպիսի շփոթություն կար և որոշակի պլան չէր կազմված, չնայած սկսած հուլիսից մինչև հոկտեմբեր բավականին ժամանակ կար:

Գեն[երալ] Վոլսկու բնակարանից ես ուղղվեցի օկրուգի շտաբ: Շտաբ մտնելիս ինձ մոտեցավ շտաբայիններից գնդ[ապետ] Կրիվցովը և հաղորդեց, որ ես նոր նշանակում եմ ստացել, այսինքն նշանակվում եմ Կովկասյան 2-րդ հրաձգ[ա-]յին բրիգադի ժամանակավոր հրամանատար: Այս նշանակումը առաջարկվել էր գեն[երալ] Վեսելովգորովին, սակայն նա հրաժարվել էր: Ես մոտեցա գեն[երալ] Վեսելովգորովին և նա հաստատեց այդ նշանակումը: Նրանից հետո ես գնացի շտաբի պետ, գեն[երալ] Յուդենիչի մոտ: Նա ինձ հայտնեց այդ նշանակման մասին և ասաց, որ ես շտապ մեկնեմ, քանի որ շուտով պետք է սկսվեն մարտական գործողությունները: Նրա մոտից ես գնացի գեներալ-կվարտիրմեստեր<sup>44</sup> Բոլխովիտինովի<sup>45</sup> մոտ: Նա ինձ շնորհավորեց նշանակման առթիվ (մենք նախկինում ծառայել էինք Վրացական գնդում, և նա իմ ենթական էր եղել) և խորհուրդ տվեց անմիջապես ներկայանալ Ադրբեջանական<sup>46</sup> ջոկատի պետ գեներալ Չեռնոզուբովին<sup>47</sup>, որն այդ ժամանակ շտաբում էր: Ես գեն[երալ] Չեռնոզուբովին գտա շտաբի շարային մասում և ներկայացա նրան: Նա ինձ առաջարկեց [հոկտեմբերի] 23-ին միասին մեկնել, սակայն ես ասացի, որ դեռևս չեմ ստացել գրավոր հրամանները և ճանապարհավճարը, երբ ստանամ անմիջապես կմեկնեմ: Հոկտեմբերի 22-ին ստացա ճանապարհավճարը և գրավոր հրամանները: Հաջորդ օրը ներկայացա գեներալ Միշլասկուն: Նա ինձ շնորհավորեց նշանակման առթիվ ու խորհուրդ տվեց վերցնել տաք շորեր, քանի որ ստիպված ենք լինելու ձմեռը մեծ լեռնանցքներով հարձակվել Վանի վրա: Փոխարքային չներկայացա, քանի որ նա հիվանդ էր:

Շտապ ձեռք բերեցի անհրաժեշտ ամեն ինչը և հոկտեմբերի 24-ին՝ գիշերը ժամը 12-ին մեկնեցի Ջուլֆա: Մեծ դժվարությամբ վագոնում տեղ գտա: Հյուրընկալեց ինձ ինչ որ երկաթուղային ծառայող: Պարզվեց, որ անհրաժեշտ էր մեկ օր առաջ տեղ պատվիրել:

[Հոկտեմբերի] 26-ի երեկոյան ես Ջուլֆայում էի: Կայարանում հանդիպեցի Կովկասյան 2-րդ հրաձգային բրիգադի 5-րդ գնդի շտաբ-սպա, գնդապետ Վոլկրեսենսկուն<sup>48</sup>: Նա ներկայացավ ինձ, և ես խնդրեցի օգնել խոյ գնալու համար շարժակազմ գտնելու: Նա ինձ համար կառք վարձեց: Ես գիշերեցի վագոնում, չնայած գնդապետ Վոլկրեսենսկին իր մոտ էր հրավիրում: Նա Ջուլֆայի պարետն էր:

[Հոկտեմբերի] 27-ին ես վաղ արթնացա: Անցնելով կայարանային շենքով ես տեսա ձերբակալված թուրքական հյուպատոսին, որին Թիֆլիս էին տանում: Մինչև

44 Թիկունքի պետ, որը միաժամանակ տնօրինում էր հետախուզությունը:

45 **Բոլխովիտինով Լեոնիդ Միտրոֆանի** (1871-1925), գեներալ-լեյտենանտ, Կովկասյան ռազմական օկրուգի գեներալ-կվարտիրմեստեր (1914 թ. հունվարի 21-ից մինչև 1915 թ. հունվարի 31-ը), միաժամանակ Կովկասյան դաշտային բանակի շտաբի պետ: 1918 թ. ծառայության է անցել Կարմիր բանակում: Օգոստոսին Եկատերինոդարում (այժմ՝ Կրասնոդար) գերվել է բոլշևիկների դեմ կռվող Կամավորական բանակի կողմից և դավաճանության համար դատապարտվել մահապատժի, սակայն բանակի հրամանատար գեներալ Ա. Դենիկինը չեղարկել է հրամանը, աստիճանագրել է Լ. Բոլխովիտինովին շարքային: Մարտերում ցուցաբերած քաջության համար վերականգնվել է նրա նախկին կոչումը: Սպիտակ շարժման պարտությունից հետո բնակվել է արտասահմանում, որտեղ էլ ինքնասպանությամբ վերջ է տվել կյանքին: Ենթադրվում է, որ պատճառը Չեկայի հետ նրա համագործակցության փաստի հրապարակումն էր: Հայտնի էր հայերի՝ հատկապես կամավորների նկատմամբ ունեցած թշամանքով:

46 Իրանական Ատրպատականի աղավաղված անվանումը, որը ներկա Ադրբեջանի անվանման հիմք է դարձել:

47 **Չեռնոզուբով Ֆյոդոր Գրիգորիի** (1863-1919), գեներալ-լեյտենանտ, Կովկասյան 4-րդ կազակային դիվիզիայի (Ադրբեջանական ջոկատ) պետ:

48 **Վոլկրեսենսկի Վասիլի Գրիգորիի** (1888-1951), գնդապետ, թատերական գործիչ: Մասնակցել է Պարսկաստանում մղված մարտական գործողություններին, Բաքվի պաշտպանությանը: Վարդանդության ժամանակ հիմնել և ղեկավարել է «Ռուսական բալետը Մինտե Կադյուն» և «Յուրահատուկ ռուսական բալետ» խմբերը: Հանդես է եկել գնդապետ դե Բազիլ կեղծանունով:

պատերազմի հայտարարումը թուրք գործակալները վխտում էին Պարսկաստանում<sup>49</sup> ու ձգտում էին Պարսկաստանում գտնվող մեր զորքերի դեմ հանել պարսկական ու թուրքական քրդերին<sup>50</sup>: Այսպես, իսկական մարտեր էին մղվում [հուլիսի] 20-ից հետո Կուշինյան լեռնանցքի մոտ և ք. Ուրմիայում: Չնայած այդ հարձակումները և մարտերը հակառակորդի համար ավարտվում էին անհաջող, այնուամենայնիվ մեր կողմից նույնպես զգալի զոհվածներ եղան և մենք նույնիսկ ք. Ուրմիան մաքրեցինք [թշնամուց]:

Ջուլֆայից վաղ մեկնեցի: Եղանակը և ճանապարհը հաճելի չէին: Մանր անձրև էր գալիս, կար կպչուն ցեխ և կանաչի բացարձակ բացակայություն: Ստիպված գիշերեցի Եվագլու գյուղի մոտ: Այստեղ հրաձգային բրիգադի զորահանգրվանային կայանն էր:

Հաջորդ օրը կանուխ մեկնեցի ք. Խոյ: Ք. Խոյ մտնելիս հանդիպեցի գեն[երալ] Չեռնոզուրովին և Կովկասյան] 6-րդ հրաձգային] գնդին: Գունդը շարվել էր նախկին պետ, գեն[երալ] Վորոպանովի<sup>51</sup> [ծառայության] սոր վայր մեկնելու առթիվ: Ես ներկայացա գեն[երալ] Չեռնոզուրովին: Նա ինձ թույլատրեց ողջունել գնդին:

Ես կանգ առա իմ շտաբի պետ, գնդապետ Պոլտավցևի<sup>52</sup> մոտ: Հաջորդ օրը ստուգեցի 6-րդ գունդը և մարտկոցը: Ծանոթացա սպայական ու հրամանատարական կազմի հետ: Գեն[երալ] Չեռնոզուրովի խորհրդով այցելեցի մեր հյուպատոս Չեռնյակին, Խոյի ազդեցիկ դեմք Կարաբուզարին, էմիր Թումանյան և նահանգապետին:

Խոյ քաղաքը չափերով ու բնակչության թվով բավականին մեծ էր, ինչպես բոլոր ասիական քաղաքները [ուներ] ծուռ, չսալահատակված փողոցներ, բացի մի քանի փողոցներից, որոնք սալահատակվել էին ռուսական զորամասերի գտնվելու ժամանակ: Նա [Խոյը] շրջապատված էր մեծ, հաստ պատով: [18]20ական թվականներին Խոյը համարվում էր ուժեղ ամրոց: Այդ ամրոցը, կարծես, կառուցել էր ինչ որ նշանավոր բելգիացի կամ անգլիացի ձարտարագետ: Նա հարմարեցված էր ինչպես հրետանային, այնպես էլ հրացանային պաշտպանության համար: Պարիսպը չորս դարպաս ուներ: Իհարկե, ներկա ժամանակում այն որպես ամրոց նշանակություն չուներ: Քաղաքային ողջ կյանքը կենտրոնացված էր ամրոցային պարսպի մեջտեղում: Պատի միայն արևելյան հատվածում կար շինություններ՝ հյուպատոսի տունը ու որոշ շինություններ, որոնք կառուցվել են կապալառու պարսիկների կողմից մեր զորամասերի՝ հրետանու ու հեծելազորի համար: 6-րդ հրաձգային] գունդը տեղակայված էր ամրոցային պատի ներսում գտնվող մասնավոր տներում: Քաղաքում կար մեծ փակ շուկա: Պարսկաստանում Ռուսաստանի և Անգլիայի միջև ազդեցության ոլորտի սահմանազատումից<sup>53</sup> հետո, 1910 թ. մեր զորքերը տեղակայվեցին Պարսկաստանի հյուսիսային մասում: Կովկասյան] 2-րդ հրաձգային] բրիգադն այնտեղ տեղափոխվեց 1911 թ. Երևանի նահանգից: Այդ ժամանակ այնտեղ էին տեղակայված 21-րդ դիվիզիայի Ապշերոնյան ու Շիրվանյան գնդերը հրետանու հետ միասին, նմանապես տեղակայված էին կազակային 4 գնդեր: 1913 թ. այդ գնդերն իրենց հրետանիով 2 կազակային գնդերով դուրս էին բերվել Պարսկաստանից: Խաղաղ ժամանակ բրիգադը տեղակայված էր հետևյալ կերպ. 5-րդ գունդը՝ ք. Ուրմիայում, 6-րդ գունդը՝ ք. Խոյում, 7-րդ գ[ունդը]՝ ք. Դիլմանում, իսկ 8-րդ գունդը՝ Թավրիզում: Վաշտերն ուժեղացված կազմով էին, իսկ գնդերը [կազմված էին] 2

49 Ավելի մանրամասն տես Սահակյան Ռուբեն, Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և ընթացքում ռուս-թուրքական ռազմաճակատում հետախուզական ծառայությունների գործունեության պատմությունից (1914-1917 թթ.), «ՊԲՀ», Եր., 2011, N 3, էջ 94-119:

50 Տես Սահակյան Ռուբեն, Ռուսական բանակի հայկական և քրդական ջոկատները Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, «Բանբեր Հայաստանի արխիվներին», Եր., 2010, N 1, էջ 26-40:

51 Վորոպանով Նիկոլայ Նիկոլայի (1854-1918), գեներալ-լեյտենանտ:

52 Պոլտավցև Վլադիմիր Նիկոլայի (1875-1937), գեներալ-մայոր, Կովկասյան 7-րդ հրաձգային գնդի հրամանատար:

53 Համաձայնագիրը կնքվել է 1907 թ. օգոստոսի 18-ին: Որոշվել է, որ Ռուսաստանի ազդեցության տակ է անցնում Պարսկաստանի հյուսիսը, անգլիացիներին՝ հարավը. իսկ կենտրոնը դառնում է չեզոք գոտի:

գումարտակներից: Զորահավաքից հետո վաշտերում կար 300–350 սվին: Համալրումը բացառապես կովկասյան բնակիչներից էր: Դիվիզիոնային հրետ[անին] բաղկացած էր լեռնային թնայնություններից: Մարտկոցում կար 8-ական թնայնություն: Դրանք [իրետա-նին] խաղաղ ժամանակ տեղակայված էին հետևյալ կերպ՝ մեկ մարտկոց ք. Թավրիզում, մյուսը ք. Խոյում, իսկ երրորդը Դիլման և Ուրմիա քաղաքներում, բրի-գադային համբարակությունը, գումակը, լազարեթը<sup>54</sup> և վիրակապման ջոկատը՝ Խոյում: Զորակոչից հետո գտնվում էին նաև հետևյալ զորամասերը՝ 1-ին հերթի<sup>55</sup> կազակային գնդերը՝ Պոլտավյանը<sup>56</sup> ք. Խոյում, Սունժենյանը<sup>57</sup> ք. Դիլմանում, 3-րդ հերթի Թամանյանը<sup>58</sup> ք. Խոյում և 3-րդ հերթի Կուբանյանը<sup>59</sup> ք. Ումիայի մոտ, զորա-հանգրվանային գումարտակը՝ Ջուլֆա քաղաքում:

Թուրքիային պատերազմ հայտարարելուց հետո Ադրբեջանում<sup>60</sup> տեղակայված զորքերում տեղի ունեցան հետևյալ փոփոխությունները՝ 8-րդ հրաձգային գնդի 6 վաշտ ու մեկ մարտկոց [տեղակայվեցին] Թավրիզում, 8-րդ հրաձգային գնդի 2 վաշտ տեղափոխվեց ք. Դիլմանի շրջակայք: 6-րդ հրաձգ. գնդի մեկ վաշտ և Պոլտավյան կազակային գնդի 1 հարյուրյակ առանձնացվեցին Վառ գյուղը՝ Կոթուրի լեռնանցքին հետևելու համար (ճանապարհը լեռնանցքով սկզբնապես տանելի է, իսկ հետո վերածվում է արահետի, իսկ Կոթուրից [կար] բավականին լավ խճուղա-յին ճանապարհի դեպի Շարապխանե, ք. Սարայ ու դեպի Վան):

7-րդ գնդից ուղարկվեցին 2 վաշտ և Սունժենյան գնդի 1 հարյուրյակ դեպի Խանասորի լեռնանցք (այդ լեռնանցքով անցնում էր դեպի ք. Բաշկալե տանող ճա-նապարհը և չհասնելով այդ քաղաքին /ճանապարհը/ թեքվում էր դեպի Չուխ Գյա-դուկ լեռնանցքը և ապա դեպի Խոշաբ գյուղը և դեպի Վան): Դիլմանից արևմուտք՝ Բուրուշ Խորան լեռնանցք և ավելի հեռու ուղարկվեց Սունժենյան գնդի հարյուրյակ (այս լեռնանցքով ճանապարհ կար դեպի Խանիկ, Կաշկուլ գյուղերը, Կոթուր և Խոշաբ): 5-րդ հրաձգ. գնդի մեկ գումարտակ տեղափոխվեց ք. Դիլման: 5-րդ գնդի մեկ գումարտակ, կիսամարտկոց և Կուբանյան կազ. 3-րդ հերթի գունդը կանգնած էին Կունի գյուղում ու հսկում էին Կուշչինյան լեռնանցքը: Բացի այս զորամասերից նաև ք. Դիլմանի շրջակայքում Խուլասար ու Փայաջուկ գյուղերում, կազմավորվում էր Հայկական 1-ին կամավորական դրուժինան<sup>61</sup>:

Գերմանիայի կողմից պատերազմ հայտարարելուց հետո Հայկական ազգային կազմակերպությունը<sup>62</sup> առաջարկեց գեներալ Միշլանսկուն ու Կովկասյան [ռազմա-կան] օկրուգի շտաբին կազմավորել մի քանի հազար [հայ] կամավորներ: Ինձ այդ մասին ասել էր այդ կազմակերպության գլխավոր անդամներից մեկը՝ Յակով Բրիս-տափորի Ջավրիևը<sup>63</sup>: Նա կովկասյան ղեկավարությանը համոզում էր, որ իրեն գե-

54 Զինվորական հիվանդանոց:

55 Ռուսական բանակում 1-ին հերթի զորամասերը համալրվում էին 24-ից 30, 2-րդիսը՝ 31-38 և 3-րդիսը՝ 39-ից բարձր տարիք ունեցողներով: Առավել մարտունակ ու պատրաստված էին համարվում 1-ին հերթի զորամասերը:

56 Լրիվ անվանումն է՝ Պոլտավյան 1-ին կուբանյան կազակային կոշտոյ առաման Սիդոր Բելիի գունդ:

57 Լրիվ անվանումն է՝ Սունժենյան-Վլադիկավկասյան գեներալ Սլեպցովի 1-ին գունդ:

58 Լրիվ անվանումն է՝ Կուբանյան կազակային զորքի գեներալ Բեզկրովնիի Թամանյան 1-ին գունդ:

59 Լրիվ անվանումն է՝ Կուբանյան կազակային զորքի 1-ին գունդ, գեներալ-ֆելդմարշալ Միխայիլ Նիկո-լանիչի գունդ:

60 Իրանական Ատրպատական:

61 Կովկասյան բանակի կազմում գործող հայկական կամավորական ստորաբաժանումները հայտնի էին խումբ, գունդ, բանակ, իսկ ռուսական պաշտոնական փաստաթղթերում՝ դրուժինա անվամբ, որը նշանակում է աշխարհագրային կազմավորում:

62 Նկատի ունի Թիֆլիսի Հայոց ազգային կենտրոնական բյուրոն, որը 1914 թ. սեպտեմբերի 10-ին կամավորական շարժումը ղեկավարելու համար հիմնում է Հայ կամավոր խմբերի կարգադրիչ մարմին, որի անդամներն էին՝ Ռոստոմը, Հ. Ջավրիյանը (Յ. Ջավրիև), Ս. Վրացյանը, Ա. Գյուլխանդանյանը, Ն. Արաբյանը և Ա. Գարոն (Գարեգին Փաստրամձյան): Փոխարքայի հետ անմիջական կապը պահպանում էր Վրաստանի և Իմերեթի հայոց թեմի հոգևոր առաջնորդ Ս. Եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը, իսկ բանակային հրամանատարության հետ՝ Ս. Հարությունյանը և Ա. Խատիսյանը:

63 **Ջավրիև Յակով Բրիստափորի (Ջավրիյան Հակոբ Բրիստափորի, 1866–1920)**, հայ հասարակական-քաղաքական գործիչ, ՀՅԴ անդամ, մասնագիտությամբ բժիշկ: Մեծ ջանքեր է ներդրել Արևմտյան Հայաստանի ազատագրության, ապա վերաշինության գործում: Նա և Ռոստոմը (Ստեփան Զորյան) ընտրել էին

րազանց կերպով հայտնի էին թուրքական նախապատրաստությունները մինչև պատերազմի հայտարարումը: Գերմանիայի կողմից պատերազմ հայտարարելուց հետո Թուրքիայում ևս հայտարարվեց զորահավաք: Զորակոչվեցին 17-ից 50 տարեկանները: Թուրքերը ենթադրում էին զգալի ուժեր կուտակել իրենց ակտիվ գործողությունների համար: Սակայն այդ տվյալները և հորդորները ապարդյուն էին գնն. Միշլանսկու և Կովկասյան լուսավարական օկրուգի շտաբի համար: Նրանք ավելի շատ հիմնվում էին իրենց հետախուզության վրա<sup>64</sup>: Նրանց սխալվելը հաստատվեց հետագա օպերացիաների ժամանակ:

Թույլատրեցին կազմավորել միայն չորս դրուժինաներ<sup>65</sup> յուրաքանչյուրը մեկ գումարտակ կազմով: Դրուժինաների գլուխ կանգնեցին սիրված ժողովրդական առաջնորդները՝ 1-ինինը՝ Անդրանիկը<sup>66</sup>, 2-րդինը՝ Դրոն<sup>67</sup>, 3-րդինը՝ Համազասպը<sup>68</sup> և 4-րդինը՝ Քեռի<sup>69</sup>: 1-ինը կազմավորվում էր Պարսկաստանում՝ ք. Իլիմանի շրջակայքի հայկական գյուղերում, 2-րդը՝ ք. Իգդիրում, 3-րդը՝ Երևանում<sup>70</sup> և 4-րդը՝ Կարսի մոտ: Վաշտում կար մոտ 250 հոգի և բացի այդ յուրաքանչյուր վաշտում կար 10-ից 15 հոգուց բաղկացած հեծելազոր, իսկ որոշ դրուժինաներում առանցաված էր հեծելազորը:

1-ին դրուժինան համալրվել էր բացառապես թուրքահայերով<sup>71</sup>: 1-ին դրուժինայի ղեկավար էր նշանակվել Վրացական 14-րդ գրենադերական գնդի սպա, կապիտան Արտեմ Հովսեփյանցը<sup>72</sup>, որը գիտեր ռազմական գործը և շատ գործունյա էր: Այդ դրուժինայի բժիշկն էր Յակով Քրիստափորի Զավրիկը: Այդ դրուժինան նրա զավակն էր: Յակով Քրիստափորի Զավրիկը ինձ հայտնեց, որ Գերմանիայի կողմից պատերազմ հայտարարելուց հետո երիտթուրքական կուսակցությունը Էնվեր փաշայի<sup>73</sup> ու Թալաթ բեյի<sup>74</sup> գլխավորությամբ փորձում էին բանակցել Հայ. Ազգ. կազմակերպության (դաշնակցականների) հետ, որպեսզի թուրքահայերը պատերազմի ժամանակ միանան իրենց՝ խոստանալով բազմաթիվ արտոնություններ: Այդ առաջարկը մերժվեց, քանի որ հայերն իրենց փորձով գիտեին, թե ինչ են նշանակում նրանց խոստումները, և բացի այդ, հայերը միշտ ձգտել են դեպի Ռուսաստան ու նրանից էին սպասում իրենց ազատագրումը դարավոր ստրկությունից: Դրանից հետո նրանք հայերին առաջարկեցին, որպեսզի նրանք պատերազմը

գործունեության ամենադժվարին ու վտանգավոր վայրերից մեկը՝ Կարինը [Էրզրում]: 1917 թ. հանդիսացել է ռուսական զորքերի կողմից «Պատերազմի իրավունքով գրավված թուրքական Հայաստանի և Թուրքիայի այլ շրջանների» գեներալ-կոմիսար, գեներալ Պ. Ավերյանովի քաղաքացիական հարցերով օգնական (տեղակալ):

64 Կովկասյան բանակի թիկունքի պետ, միաժամանակ հետախուզության ղեկավար գեներալ Ե. Մասլովսկին մեղավոր էր համարում պատերազմի նախօրյակին բանակային հետախուզության ղեկավար նշանակված սպային, որի գործած սխալների հետևանքով տասնամյակների ընթացքում ստեղծված գործակալական ցանցը ի դերն եղավ, տե՛ս **Масловский Е. В.**, Мировая война на Кавказском фронте 1914-1917 г., Париж, 1933, էջ 47-48.

65 Պատերազմի սկզբում կազմավորվել են վեց կամավորական խմբեր:

66 **Օգանյան Անդրանիկ** (1865-1927), հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչ, հայդուկ, ռուսական բանակի գեներալ-մայոր:

67 **Կանայան Դրաստամատ (Դրո)**, 1883-1965), հայ հասարակական-քաղաքական, ռազմական և պետական նշանավոր գործիչ, ՀՅԴ անդամ:

68 **Սրվանձոյանց Համազասպ** (1873-1921), հայ հասարակական-քաղաքական և ռազմական նշանավոր գործիչ, ՀՅԴ անդամ:

69 **Գավաֆյան Արշակ (Քեռի)**, 1858-1916), հայ հասարակական-քաղաքական և ռազմական նշանավոր գործիչ, հայդուկ, ՀՅԴ անդամ:

70 Երևանում կազմավորվում էր 5-րդ խումբը, որի հրամանատարն էր **Վարդանը (Սարգիս Մեհրաբյան)**: Խումբը ռազմաճակատ չմեկնեց գեներալ չլինելու պատճառով: 3-րդ խումբը կազմավորվել է Կաղզվանում:

71 Արևմտահայերով:

72 **Հովսեփյանց Արտեմ** (1872-1921), ռուսական բանակի կապիտան, փոխգնդապետ (1916) Հայկական 4-րդ գումարտակի հրամանատար:

73 **Իսմայիլ Էնվեր փաշա** (1881-1921), Օսմանյան կայսրության ռազմական նախարար, «Միություն և առաջադիմություն» երիտթուրքական կուսակցության ղեկավարներից, Հայոց ցեղասպանության կազմակերպիչներից, պատերազմական հանցագործ:

74 **Մեհմեդ Թալաթ փաշա** (1874-1921), Օսմանյան կայսրության Ներքին գործերի նախարար, մեծ վեզիր, երիտթուրքական կուսակցության ղեկավարներից, Հայոց ցեղասպանության կազմակերպիչներից, պատերազմական հանցագործ:

սկսվելու դեպքում հավատարիմ լինեն, որին նրանք ոչինչ չպատասխանեցին<sup>75</sup>:

[1914 թ. հոկտեմբերի] 29-ին ստացվեց Ադրբ. ջոկատի պետի կարգադրությունը բրիգադին՝ ջոկատի համբարակին հանձնել անիվավոր գումակը և փոխարենը ստանալ բեռնակիր ուղտեր: Այդ նպատակահարմար հրամանով հիմնավորապես թեթևանում էր զորամասերի տեղաշարժը այն սուկալի ճանապարհներով, որոնք կային ինչպես Պարսկաստանում, անպես էլ Թուրքիայում:

[Հոկտեմբերի] 30-ին ես ստացա Ադրբ. ջոկատի հրամանատարի հրամանը՝ շտապով տեղափոխվել ք. Դիլման ու այնտեղ ուղարկել 6-րդ գնդի մեկ գումարտակ կիսամարտկոցով, որը և կատարվեց իմ կողմից: [Հոկտեմբերի] 31-ին ես ճանապարհվեցի իմ շտաբի հետ և միաժամանակ դուրս եկան նշված զորամասերը: Այդ նույն օրը գեներ. Չեռնոզուրովը իր շտաբի հետ նույնպես շարժվեց ք. Դիլման: Առավտոից անձրևում էր: Ճանապարհը շատ ծանր էր հատկապես Կարաթեփեի լեռնանցքով: Ճանապարհը հողային էր: Զարմանալի անհոգություն: Պարսկաստանում մեր զորքերի գտնվելու ընթացքում նույնիսկ կարևոր ճանապարհները չէին խճապատել: Ք. Զուլֆայից մինչև ք. Դիլման, չհասած ք. Խոյ, միայն մի քանի վերստ էր խճապատված:

Միայն ուշ երեկոյան զորամասերին հաջողվեց հասնել ք. Դիլման, որն իսկական ասիական քաղաք էր նեղ, ծուռուժուռ փողոցներով, որով նոր դեմքին դժվար էր կողմնորոշվել նույնիսկ ցերեկով: Իմ շտաբի համար տեղ նշանակվեց այն նույն շենքում, որտեղ տեղավորվել էր ջոկատի պետ գեներ. Չեռնոզուրովը:

Նոյեմբերի 1-ին տագնապալի հեռագիր ստացվեց Խանասորի ջոկատի պետ, փոխգնդապետ Ծերեթելիից: Նա խնդրում էր ուժեղացնել իր ջոկատը: Նրան ուղարկվեց 7-րդ գնդի ևս 2 վաշտ:

Նոյեմբերի 3-ին գեներ. Չեռնոզուրովն ինձ առաջարկեց [նոյեմբերի] 4-ին ներկա գտնվել Հայկական կամավորական [1-ին] դրուժինայի ստուգատեսին: Ես հաճույքով համաձայնվեցի: [Նոյեմբերի] 4-ին եկա նշանակված վայրը, մոտ 2 ժամ, մինչև կեսօր սպասեցի, սակայն ինչպես պարզվեց՝ Բուրուշ-Խորան լեռնանցքի ուղղությամբ գտնվող դիտակետի ուղեկալ պահակակետից ստացվել էր հաղորդում այդ լեռնանցքում (ք. Դիլմանից արևմուտք) թուրքական զգալի ուժերի կուտակման մասին, որի պատճառով, նոյեմբերի 4-ին, շտապ այնտեղ էր ուղարկվել Հայկական 1-ին կամավորական դրուժինան: Այսպիսով ես չկարողացա հանդիպել ու ծանոթանալ Անդրանիկի հետ:

Նույն օրը Խանասորի լեռնանցք ուղարկվեց 7-րդ գնդի գումարտակը և կիսամարտկոց 7-րդ գնդի հրամանատար, գնդապետ Օբրագցովի<sup>76</sup> ղեկավարությամբ: Ցավոք այդ մասին ես տեղեկացա պատահաբար: Այդ երեկո ես նույնպես հրաման ստացա [նոյեմբերի] 5-ին տեղափոխվել Խանասոր ու նոյեմբերի 7-ին Խանասորի ջոկատի հետ սկսել հարձակում Կարատչիան գյուղի վրա (Խանասորի լեռնանցքից արևմուտք՝ 10 վերստ<sup>77</sup>), բռնել մեր նկատմամբ թշնամական վերաբերմունք ունեցող քուրդ բեկին<sup>78</sup>, իսկ եթե նա այնտեղ չլինի՝ պայթեցնել նրա տունը, որի համար իմ ենթակայության էին հանձնել 6 սակրավորների՝ պայթուցիկ նյութերով: Իմ ենթակայությանն էին հանձնվել 8-րդ հրաձգ. գնդի 2 վաշտեր, որոնք իմ հարձակվելուց

75 ՀՅԿ ներկայացուցիչների հետ բանակցությունները տեղի են ունեցել Կարինում, երբ 1914 թ. հուլիսի 25-ից մինչև օգոստոսի 17-ն ընթանում էր ՀՅԿ VIII Ընդհանուր ժողովը: Երիտթուրք գործիչներ Բեհաեդդին, Շաքիր, Նազըմ բեյերն ու այլք զանազան խոստումներ տվեցին, սակայն բանակցությունները վարող Ռոստոմը, Վառլամը և Ակնունին վկայակոչեցին ժողովի որոշումը. «Պատերազմի պարագային, յուրաքանչյուր պետության քաղաքացի պետք է կատարե իր պարտականությունները՝ իր պետության նկատմամբ»:

76 Օբրագցով Վսեվոլոդ Իվանի (1859-1938), գեներալ-մայոր (04.04.1917), Կովկասյան 7-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար (1913-1916):

77 1 վերստը հավասար է 1,06 կմ:

78 Կարատչիան կամ Կարաչիան գյուղում բնակվում էր քրդական մագրիկ ցեղի ցեղապետ Շարաֆ բեյը, որը հարձակվել և կոտորել էր 1896 թ. Վանից նահանջող հայերի զգալի մասին, տես Ա. Գո, Իմ հիշողությունները, առաջաբանը և ծանոթագրությունները Ռուբեն Գասպարյանի և Ռուբեն Սահակյանի, Եր., 2015, էջ 303:

հետո պետք է պաշտպանեին Խանասորի լեռնանցքը:

Հայկական դրուժինան [սոյեմբերի] 4-ի երեկոյան բախվեց հակառակորդի հետ: Նա [թշնամին] գրավել էր Բուրուշ-Խորան լեռնանցքից հարավ ու Խարավիլ լեռից (ք. Դիլմանից) հյուսիս-արևմուտք՝ 15-20 վերստ) հարավ-արևելք գտնվող Աշնակ գյուղը: Առավոտյան դրուժինան գրոհեց այդ գյուղը և այդ կերպ Պարսկաստանում գտնվող զորքերից առաջինը ստացավ մարտական մկրտություն:

[Սոյեմբերի] 5-ին ինձ հետ միասին, միաժամանակ Հայկական դրուժինային օգնելու համար ուղարկվեց 5-րդ հրաձգ. գնդի գումարտակը լեռն. չորս թնդանոթներով՝ գնդապետ Մակավիվայի ղեկավարությամբ: Ես այդ [օգնական ուժի] ուղարկելու մասին պատահաբար տեղեկացա, քանի որ միաժամանակ անցնում էինք նույն գյուղով: Ապա այնտեղ ուղարկվեցին Սունժենյան կազակների 4 հարյուրյակներ՝ գնդի հրամանատար, գնդապետ Ջենցովի<sup>79</sup> հրամանատարությամբ: Խանասոր շարժվելիս, ես [սոյեմբերի] 5-ին լսում էի հրացանների, իսկ 6-ին՝ հրետանային կրակոցներ: [Սոյեմբերի] 5-ին կովում էր միայն Ադրանիկը, իսկ [սոյեմբերի] 6-ին՝ տեղ հասած ուժերի հետ: Հարկադրված էի գիշերել դաշտում: Գիշերը բավականին ցուրտ էր: Շտաբի գումակը գնաց 5-րդ գնդի գումակի հետևից: [Սոյեմբերի] 6-ին շարունակեցինք առաջանալ: Մոտ ժամը 11-ին հասանք Խանասոր:

Ստուգեցի 7-րդ գունդը, ծանոթացա սպաների ու հրամանատարի հետ: Ստուգեցի նաև մեր դիրքերը և ծանոթացա հակառակորդի դիրքերի հետ: Մեր դիրքը հակառակորդից բաժանվում էր խորը ձորակով: Հակառակորդի [զբաղեցրած] տեղանքը գերիշխող էր մեր նկատմամբ: Առավել խոցելի էին դիրքերի թևերը: Գնդի հրամանատարին առաջադրեցի՝ սոյեմբերի 7-ին անցնել հարձակման: Նրան հանձնարարված էր հակառակորդին դուրս մղել գրաված դիրքերից, որից հետո առաջանալ արևմուտք՝ Կարատչիան գյուղի վրա, գրավել այդ գյուղը ու բռնել այնտեղ բնակվող քուրդ բեկին, իսկ եթե նա այնտեղ չլինի՝ պայթեցնել նրա տունը, որի համար նրա ենթակայությանն են հանձնում 6 սակրավորների՝ պայթուցիկ նյութով:

Հակառակորդը բաղկացած էր ժանդարմներից, փոքրաթիվ կանոնավոր զորամասից, քրդական համիդեական<sup>80</sup> գնդերից ու զինված քրդերից: Նրանք ունեին երկու թնդանոթ:

[Սոյեմբերի] 7-ի վաղ առավոտյան սկսվեց հրետ. նախապատրաստությունը: Պարզ ու շատ լավ եղանակ էր: Սկզբնապես հրետանին թույլ էր գործում: Չէր կարողանում երկար ժամանակ նշանափործել, սակայն շուտով նշանափործից հետո ստիպեցին հակառակորդի հրետ. լռել: Ջորամասերը շարափոխվեցին մարտակարգի, որից հետո անցան հարձակման շրջապատելով [հակառակորդի] երկու թևերը: Երբ շրջապատող զորամասերը սկսեցին սպառնալ անցնել հակառակորդի թիկունքը, նա չդիմացավ դրան ու սկսեց հապշտապ նահանջել Ալբեկ-սու գետի ձորով դեպի Դեեր, իսկ հիմնական ուժերը Խանասորից արևմուտք՝ Ջավան-դաղ լեռան լեռնաձյուղը: Ջոկատը մարտակարգով հարձակվեց մինչև Ալբեկ-սու գետը, իսկ հետո՝ Կարատչիան գյուղը: Գյուղը լքվել էր հակառակորդի կողմից: Այդ մարտերի ընթացքում գեն. Չեռնոզուբովի կողմից ուղարկվել էին 50 հեծյալ քրդեր: Նրանք ինձ որևէ կերպ չօգնեցին, այլ իրենց թալանչիական հակումներով միայն անկարգություն սերմանեցին:

Մեր այս հարձակումն ինձ համոզեց մեր զորամասերի [մարտական] վատ պատրաստության մասին: Ջորահավաքի ժամանակ համալրումը, որը հիմնականում Կովկասի բնակիչներ էին, եկել էր հուլիսին, մինչև Թուրքիայի կողմից պատերազ-

79 **Ջենցով Սերգեյ Իվանի** (1872-1928), գնդապետ, Սունժենյան-Վլադիկավկասյան 1-ին գնդի հրամանատար:

80 Համիդիե (թուրք.՝ Hamidiye, նշանակում է Համիդին պատկանող), հեծյալ անկանոն գնդեր, որոնք կազմված էին գլխավորապես քրդերից, ինչպես նաև չեքքեզներից ու կարափափախներից: Հիմնվել են 1891 թ. Օսմանյան կայսրության սուլթան Աբդուլ Համիդ II-ի կողմից գլխավորապես հայ ազատագրական շարժումը ճնշելու համար: Լայնորեն օգտագործվել են 1890-ական թթ. և Մեծ եղեռնի տարիներին: Լուծարվել են 1920-ական թթ.:



մի հայտարարումը, այսպիսով զորանասերը բավականին ժամանակ՝ շուրջ 2 ամիս ունենին [գինակոչիկներին] նախապատրաստելու համար, սակայն, ըստ երևույթին, դրա համար ոչինչ չէր արվել: Ես ստիպված էի մի քանի անգամ մտնել մարտական գործառնք ու վերականգնել կարգուկանոնը: Սպաներից մեկն այն աստիճան հարբած էր, որ ստիպված էի [թիկունքում] թողնել, իսկ հետագայում հեռացնել զորամասից: Եթե հակառակորդն ավելի լուրջ [ուժեղ] լիներ հավանաբար դժվար կլիներ մեզ նրան հաղթել: Բեկը Կարատչիանում չէր: Հրամայեցի պայթեցնել նրա տունը, որը չնայած թույլ կառույց էր, սակրավորներին չհաջողվեց այդ անել անհրաժեշտ աստիճանի: Փոխարենը քրդերը [գեներալ Չեռնոզուբովի ուղարկած] արագ հաշվեհարդար տեսան նրա [բեկի] գույքի հետ, որը մնացել էր հապշտապ նահանջի պատճառով: Հեռախոսով կապվեցի Խանասորի լեռնանցքի հետ ու զեկուցագիր ուղարկեցի գեն. Չեռնոզուբովին:

Գիշերը հարկադրված էի չորս բոլորը պահպանություն նշանակել: [Նոյեմբերի] 8-ին սպասում էի Ադրբ. ջոկ. պետի հետագա կարգադրություններին: Ես այդպես էլ չկարողացա հասկանալ իմ հարձակման նպատակը: Երկար ժամանակ որևէ կարգադրություն չստանալով ես արդեն ցանկանում էի իմ նախաձեռնությամբ շարժվել Ալբեկ-ուու գետի հովտով դեպի ք. Բաշկալե, սակայն ցերեկվա մոտ ժամը 11-ին ստացա հեռախոսագիր հրամանով՝ ջոկատով շարժվել դեպի Խանիկ գյուղը օգնելու Բուրուշ-Խորան լեռնանցքի մոտ գործող ջոկատին:

Հրամանի կատարման համար ես ջոկատի հետ շարժվեցի Ալբեկ-ուու գետի ձորով հյուսիս՝ դեպի Ալբիս գյուղը: Միայն շնորհիվ բեռնակիր գրաստաբեռ տրանսպորտի ես կարողացա գնալ այդ ճանապարհով, կամ ձիշտն ասած նույնիսկ արահետներով: Ճանապարհին ստիպված էինք անցնել մի շարք քրդական գյուղերով: Գյուղերը բավականին ունևոր էին: Բացի ծերունիներից ու պառավներից գյուղերում բնակիչներ չկային, մնացածները փախել էին լեռները: Նրանք զարմացել էին, որ իրենց գույքը չէր հափշտակվում: Միայն գնվում էին կառավարական հաստատությունները, հեռագրական կայանները ու ղեկավար անձանց տները:

Ջոկատը ստիպված գիշերեց Ալբիս գյուղում: Եղանակը տաք էր, մենք բոլորս տեղավորվեցինք վրաններում: [Նոյեմբերի] 9-ի առավոտյան ես ստիպված էի կողոպուտի համար վճռել հեծյալ քրդերին Պարսկաստան: Գեն. Չեռնոզուբովի մոտ ինչ-որ մոլություն կար քրդերի և հատկապես պարսկական քրդերից մեկի պարագլուխ Սիմկոյի<sup>81</sup> նկատմամբ:

Նույն առավոտ ես տեղեկացա, որ հակառակորդը Բուրուշ-Խորանում ջախջախվել ու երկու զորայուններով նահանջում է Կոթուր և Խոշաբ: Իմ հեծյալ պարեկները, որոնք ուղղվել էին [դեպի] Խոշաբ տանող ճանապարհը, հասան նահանջի ժամանակ թուրքերի կողմից լքված դաշտային թնդանտթի: Հրամայեցի թնդանտթը բերել Ալբիս գյուղ ու պայթեցնել, քանի որ այս ճանապարհներով հնարավոր չէր հասցնել Պարսկաստան: Իմ կարգադրությունից գեն. Չեռնոզուբովը շատ դժգոհ մնաց: Նա ցանկանում էր այդ թնդանտթն ունենալ իբրև ռազմավար:

Ապա ես շարունակեցի իմ ճանապարհը դեպի Խանիկ գյուղը: Ջոկատի հետագա առաջխաղացման ժամանակ հանդիպող քրդական գյուղերը դատարկ չէին ու բնակիչները պատրաստակամությամբ մեզ պարենամթերք էին վաճառում: Ես ոչ մի կերպ չէի հասկանում, թե ինչու քրդերը մեզ թույլ էին տալիս ազատ առաջանալ:

81 Սիմկո (Սըմկո) Շիկակ (1887–1930), քրդական Շիկակ ցեղի առաջնորդ: Նրան ռուսական հրամանատարությունը փորձել է օգտագործել թուրքերի դեմ պայքարում, սակայն ապարդյուն: Ցեղապետը մի քանի անգամ միացել է թուրքերին, սակայն ռուսները շարունակել են նրա հետ սին հույսեր կապել: Սիմկոն 1918 թ. մարտի 3-ին դավադրաբար սպանել է հակաթուրքական պայքար մղող նեստրական ասորիների հոգևոր առաջնորդ Մար-Շիմուն Բենիամինին, եղբորը՝ Դավիթին, ուղեկցող ռուս սպաներին ու 60 թիկնապահներին: Մարտի 28-ին հարձակվել, կողոպտել ու սպանել է Պարսկաստան նահանջող շուրջ 150 վապուրականցիների: Պաշտոնական վարկածի համաձայն՝ սպանվել է 1930 թ. հունիսի 18-ին պարսկական բանակի դեմ մղված մարտի ժամանակ, ըստ այլ տեղեկության՝ յուրայինների կողմից, տե՛ս Վ. Жигалина О. И., Русские и курды Северо-Западного Ирана во время Первой мировой войны. Новые документы, «Восточный архив», 2012, N 2, с. 54:

Նման անմատչելի տեղանքի ամեն մի քայլում նրանք կարող էին դիմադրել ու խանգարել առաջխաղացմանը:

Խանիկ գյուղ եւ ջոկատի հետ մտա ցերեկվա մոտ ժամը 12-ին: Այստեղ էին 5-րդ գնդի գումարտակը և կիսամարտկոցը: Հայկական դրուժինան ու Սունժենյան կազ. գունդը Կաշկուլ գյուղի (Կաշկուլի լեռնանցք) մոտ առաջագծում էին՝ Խանիկ գյուղից հյուսիս-արևմտյան ուղղությամբ, մոտավորապես 6 վերստ հեռավորության վրա: Այդ գյուղերը դատարկ էին: Գյուղերը փոքր էին, ուստի մարդկանց մի մասը տեղավորվեց արշավային վրաններում: Ես ստանձնեցի ջոկատի հրամանատարությունը: Շուտով ինձ [ջոկատը] համալրեցին 6-րդ հրաձգ. գնդի մեկ գումարտակով: Այս վայրերում աննպատակ մնացին մի քանի օր: Ուժեղ և խորը ձյուն տեղաց: Սկսվեց դաժան ձմեռ ձյունամրրիկներով ու ճնահյուսերով, որոնք սովորաբար լինում են այս բարձրադիր վայրերում: Ձմեռը և ձյունը մեզ անակնկալի բերեցին: Տար շոր չկար: Հատկապես ծանր էր Հայկական դրուժինայի վիճակը: Նրանց հագուստը թեթև էր, ու մարդկանց մեծ մասի մոտ չկային երկարաձիտ կոշիկներ: Նրանք տրեխներ էին կրում: Ավելի շատ նրանք տառապում էին պահակային ծառայության ժամանակ:

Կապիտան Հովսեփյանցին հարցրեցի Բուրուշ-Խորան լեռնանցքի համար մղված մարտերի մասին: Նրա խոսքերով գրեթե 2 օր մարտը վարում էր բացառապես Հայկական դրուժինան: Չնայած մոտեցավ համալրումը (5-րդ գնդի գումարտակը և Սունժենյան կազ. գունդը) գնդ. Ջենցովի հրամանատարությամբ, սակայն նրանք մարտի մեջ մտան միայն, երբ հրաման ստացվեց գնդ. Ջենցովին գլխավորել ջոկատը: Իհարկե, չպետք էր սպասել վերևից այդ կարգադրությանը: Ջոկատի հրամանատարությունը սկզբնապես պարտավոր էր ստանձնել 5-րդ գնդի հրամանատար, գնդապետ Սակաևը, ապա որպես [պաշտոնով] ավագ՝ գնդապետ Ջենցովը: Դրա հետևանքով մարտը ձգձգվեց, ու եղան ավելորդ զոհեր, բացի այդ, գնդապետ Ջենցովը շատ անվճռական մարդ էր:

Նոյեմբերի 14-ին ես հրաման ստացա ջոկատով շարժվել ք. Կոթուր և ք. Սարայ: Հրամանը կատարելու համար նոյեմբերի 15-ին ջոկատով ճանապարհ ընկանք՝ առաջապահում նշանակելով Սունժենյան գունդը ու Հայկական դրուժինան: Սունժենյան գնդի հրամանատար, գնդապետ Ջենցովն ինձ մոտ եկավ գանգատով, թե նա իր հեծելագործով ստիպված է հետևակի համար ձեռքել խոր ձյունը և խնդրում է իր գունդը որպես առաջապահ չնշանակել: Ես նրան հրամայեցի անհապաղ կատարել իմ հրամանը, հակառակ դեպքում ես նրան կզրկեմ գնդի հրամանատարությունից ու կզեկուցեմ այդ մասին: Միաժամանակ հրամայվեց ճանապարհ ընկնել ինչպես հիմնական ուժերին, այնպես էլ առաջապահին: Շարժվելը դժվար էր խոր ձյան ու մեծ ձյունակուտակումների պատճառով: Ճանապարհին ընդհանրապես չէր երևում: Ստիպված էինք խարխափելով առաջանալ: Գլխավոր ուժերը գիշերելու համար կանգ առան Գավերիկ գյուղում (Կոթուրից կես ճանապարհի վրա), առաջապահը մարտով գրավեց ք. Կոթուրը: Այդ նույն գիշերն ինձ մոտ ուղարկեցին Սիմկոյի եղբորը՝ Ահմեդին մոտ 40 հեծյալ քրդերով: Նրանց ներկայությունը ջոկատում շատ տհաճ էր: Ես լավ գիտեի, որ նրանց թալանչիական հակումներից օգուտ չի լինի, իսկ գլխացավանքը շատ կլինի:

Այդ նույն երեկոյան ես, իմ շտաբի պետի հետ մշակում էինք պլան, թե ինչպես օգնենք առաջապահին առաջանալ դժվար[անցանելի] Կոթուրի կիրճով՝ ենթադրելով, որ հակառակորդը կօգտվի այդ կիրճի դժվարամատչելիությունից և ուժեղ դիմադրություն կցուցաբերի: Ես որոշեցի ձակատային գրոհը զուգակցել շրջանցելով այդ կիրճը լեռներով: Որպես ուղեկցողներ ընտրեցի ինձ մոտ եկած մի քանի քրդերի: Այդ մասին հայտնեցի առաջապահի պետին:

Առավոտյան ստացա զեկուցագիր, որ Կոթուրը մարտով գրավված է, ու կարճատև հանգստից հետո, Անդրանիկի նախաձեռնությամբ, Հայկական դրուժինան սկսեց կռիվներով խորանալ կիրճով: Դրուժինան գրոհի գնաց լեռներով, իսկ հե-

ծելագորը՝ կիրճով: Գլխավոր ուժերով շարժվելով դեպի Կոթուր՝ ես լեռներից տեսնում էի, թե ինչպես է դրուժինան իր դիրքերից քշում հակառակորդին: Հակառակորդը համառորեն պաշտպանում էր իր լեռնային դիրքերը և աստիճանաբար սահանջում լեռան խորքը:

Ցերեկվա մոտ ժամը 11-ին ես ջոկատով մտա Կոթուր: Չսայած նա համարվում էր քաղաք, սակայն ավելի ճիշտ մեծ գյուղ էր, որտեղ կային ընդամենը մի քանի տներ պատուհաններով: Ժամանակների ընթացքում այդ քաղաքին տիրել են մերթ թուրքերը, մերթ պարսիկները: Բնակիչները նախկինում հայեր էին, որոնք վաղուց մահմեդականություն էին ընդունել: Այդ մասին ինձ ասաց գյուղական տանուտերը:

Կոթուր գալով ես ստացա կապիտան Հովսեփյանցի զեկուցագիրն այն մասին, որ դրուժինան գրավել է Գարատել գյուղը (կիրճի աջ ափին, Կոթուրից 15 վերստ), հակառակորդը նահանջել է լեռները, և որ համիդ. քրդական գնդերի հրամանատարները ցանկություն են հայտնել անձնատուր լինել: Խնդրում էր կարգադրել, թե ինչպես վարվել նրանց հետ: Ես պատասխանեցի, որ անմիջապես գալիս եմ Գարատել գյուղը բանակցությունների, հենց որ ջոկատն ուղարկեմ Շարապխանե գյուղը:

Ինձ ծայրահեղորեն զարմացրեց, որ կազ. գնդի հրամանատարը չհետևեց Հայկական դրուժինային: Ես ապշեցի, երբ լսեցի փողհարի հավաքի [ազդանշանը]: Պարզվեց, որ Սունժեյան գնդի հրամանատարը, երբ Հայկական դրուժինան անցավ Ռիզա գյուղի մոտով և սկսեց կրակակոխ հետապնդել հակառակորդին, նա [գնդապետ Ջեմցովը] եզրակացրեց, որ իր գնդի աշխատանքն ավարտվել է և անհրաժեշտ է գունդը հավաքել Ռիզա գյուղի մոտ՝ հանգստի: Չէի կարող նրան [հրամանատարին] դրա համար չկշտամբել:

Կարգադրելով ջոկատին շարժվել Շարապխանե գյուղը ես անձամբ, շտաբի պետի հետ մեկնեցի Գարատել գյուղը: Ծանապարհին, Ռիզա գյուղից պաշտպանության համար վերցրեցի երկու հարյուրյակ: Հրամանատարը [գնդապետ Ջեմցովը] եկավ ինձ հետ: Այստեղ ես նրան մեկ անգամ ևս հանդիմանեցի իր ոչ ձիշտ գործողությունների համար, առավել ևս, որ ինքը եղել է առաջապահի պետը: Այնուհետև Ռիզա գյուղից լեռնային արահետներով գնացինք Գարատել գյուղը: Այնտեղ ինձ մանրամասն զեկուցեցին կապիտան Հովսեփյանցը և Անդրանիկը մարտի ու երեք հրամանատարների մեզ անձնատուր լինելու ցանկության մասին: Այդ մարտում գրավվել էին համիդ. գնդերի երկու դրոշակներ: Այստեղ ես առաջին անգամ տեսա Անդրանիկին: Նա ինձ վրա թողեց անձնապատան, հպարտ ու ազդու մարդու տպավորություն:

Ես պահակային պահպանության պետին հրամայեցի ընդունել անձնատուր եղող հրամանատարին, չզինաթափել և բանակցությունների համար ուղարկել Շարապխանե գյուղը: Սպասեցի այդ հրամանատարներին մինչև ցերեկվա ժամը 3-ը: Դրանից հետո որոշեցինք, որ հավանաբար մտքափոխ են եղել հանձնվել, ուստի որոշեցինք նույնպես ուղղվել Շարապխանե գյուղը, որտեղ գիշերում էր ջոկատը:

Լեռից կիրճը իջնելիս նկատեցի մի քանի հեծյալների, որոնք լեռն էին բարձրանում. դրանք համիդեական գնդերի հրամանատարներն էին: Նրանք ինձ մոտեցան չքնաղ արաբական ձիերով, իջան ձիերից և մոտենալով ինձ ողջունեցին: Ես հարցրեցի, թե որտեղ է նրանց գեներ, նրանք ասացին, որ սպան է խլել իրենցից: Նրանցից մեկը Սաթուն բեկն էր, իսկ մյուսը Ջաֆար բեկը, երրորդը չկար, որի պատճառով էլ նրանք ուշացան՝ ամբողջ ժամանակ սպասելով նրան:

Ես ցանկանում էի վերադառնալ Գարատել գյուղը բանակցությունների համար, սակայն Սաթուն բեկն առաջարկեց գնալ Կավելիկ գյուղը, քանի որ սպասում էր, որ այդ գյուղն է գալու երրորդ հրամանատարը: Ես մի քանի րոպե տատանվում էի ընդունել նրա առաջարկությունը, քանի որ այդ գյուղը բացարձակապես հեռու էր իմ ջոկատից, սակայն իմ տրամադրության տակ ունենալով կազակների երկու հարյուրյակ ու հայ հեծյալ դրուժինիկներին, ես համաձայնվեցի և մենք գնացինք գ.

Կավելիկ: Պարզվեց, որ այդ գյուղում կար մեր պահակային պարեկախումբը: Գյուղ մտնելիս ինձ զեկույցով դիմավորեց Սուսմենյան կազակային գնդի հարյուրապետ Բորոդինը: Սաթուն բեկը ինձ հայտնեց, որ այդ սպան է իրենցից վերցրել զենքը ու հեռադիտակները: Այդ արարքից զայրացած ես նրան հրամայեցի վերադարձնել իրերը: Հարյուրապետը սկսեց հրաժարվել: Ես իհարկե ավելի սաստիկ վրդովվեցի և հրամայեցի հրամանատարին անհապաղ կատարել իմ հրամանը, իսկ ինքս գնացի Սաթուն բեկի նշած շինությունը: Որոշ ժամանակ անց բերեցին զենքերն ու հեռադիտակները: Հեռադիտակներից մեկը դիտմամբ փոխված էր, որը ես վերադարձրեցի հրամանատարին ու հրամայեցի վերադարձնել այն, որ վերցել էր: Դա նույնպես կատարվեց: Ցավով պետք է ասեմ, որ նման դեպքերը եզակի չէին:

Սպասեցինք մինչև երեկոյան ժամը 8-ը, իսկ երրորդ հրամանատարը այդպես էլ չկար: Այդ ժամանակ ես որոշեցի նրանց հետ միասին գնալ Շարապխանե գյուղը: Ուղեկցողները նրանց քրդերն էին: Ստիպված էինք ողջ ժամանակ գնալ քրդական գյուղերի կողքով: Գիշերը շատ մութ էր ու շատ սառնամանիքային: Իհարկե, մենք մեծ վտանգի էինք ենթարկվում, սակայն ամեն ինչ բարեհաջող ավարտվեց:

Երեկոյան մոտ ժամը 10-ին հասանք Շարապխանե գյուղը: Ինձ շտաբի հետ ընդունեց մոլլան: Քուրդ հրամանատարները մեր գաղտնի հսկողության տակ տեղավորվեցին այլ շինությունում: Գիշերն ինձ արթնացրեցին Սաթուն բեկն ու մոլլան՝ զանգատվելով, որ Սիմկոյի եղբայր Ահմեդն իր քրդերի հետ գողացել է մի քանի հարյուր ոչխար ու խոշոր եղջերավոր անասուններ ու քշում է դեպի Կոթուր: Ես հրամայեցի ուղարկել կազակային հարյուրյակ հետևներից, խլել ոչխարներն ու անասունները, իսկ Ահմեդին քրդերի հետ քշել Կոթուր:

Առավոտյան ջոկատը սկսեց նախապատրաստվել ք. Սարայ գնալու համար: Կրկին ինձ մոտ եկան զանգատով: Գիշերը զորամասերը վերցրել էին մոտ հարյուր ոչխար: Ես սկզբնապես չհավատացի, քանի որ յուրաքանչյուր մարդուն տրվում էր 2-ական ֆունտ<sup>82</sup> միս, սակայն երբ երթային վրանները հավաքվեցին, ես անձամբ համոզվեցի վրանների տեղերում թափված մնացորդներով, որ նրանց զանգատը արդարացի էր: Մնացորդները հատկապես շատ էին այնտեղ, որտեղ տեղակայված էր Հայկական դրուժինան: Ստիպված վճարեցինք բնակիչներին տնտեսական կարիքների համար նախատեսված գումարից, որպեսզի նրանց հանգստացնենք:

Այդ ժամանակ ես զեկույցագիր ստացա, որ հակառակորդը հեռացել է ք. Սարայից: Հետևակն ու հեծելազորը նահանջում էին երկու ճանապահով՝ դեպի գյուղ Խոշաբ և դեպի Արձակ լիճը: Չսպասելով երրորդ համիդեական հրամանատարին՝ երբ ջոկատն ու գումակը շարժվեցին, մենք նույնպես գնացինք: Եղանակը պարզ էր, սակայն սառը քամիով: Ճանապարհին վերջապես մեզ միացավ երրորդ համիդեական հրամանատար Ջհանգիր բեկը<sup>83</sup>: Ես նկատեցի այդ հրամանատարների դեմքին զարմանք, երբ նրանք տեսան մեր ուժերը: Հավանաբար նրանք ենթադրում էին ավելի մեծաքանակ ուժեր:

Ճանապարհը ծանր էր, շատ տեղերում ծածկված էր ձյունով, ստիպված էինք ճանապարհը [ձյան կուտակումներից] մաքրել: Մինչև քաղաք մի քանի վերստ հասնելը մեզ ընդառաջ եկավ հայ ու ասորի հոգևորականությունը կրոնական հագուստներով, խաչերով ու խաչվառներով:

Քաղ. Սարայը նման էր մեծ գյուղի, կային մի քանի տներ պատուհաններով, նույնիսկ կային երկու կամ երեք հարկանի տներ, որոնց ներքևում կրպակներ էին, իսկ վերևում բնակելի սենյակներ, մնացած տները լուսավորվում էին առաստաղից: Զորամասերի զորանոցները բավականին մեծ էին ու լավ կառուցված, որտեղ և տեղավորվեցին քաղաք մտած զորամասերը: Քաղաքը գտնվում էր բաց տեղանքում: Բուսականության բացարձակ բացակայություն, իսկ, իմիջիայլոց, մեր ունեցած քար-

82 1 ֆունտը հավասար է 409,5 գրամի:

83 **Ջհանգիր աղա** (1874-1943), եզդի ժողովրդի ազգային հերոս: 1918 թ. մայիսին եզդիական հեծելախմբով մասնակցել է Բաշ Ապարանի ճակատամարտին:

տեգների վրա նշված էին մեծ այգիներ: Գեն. Չեռնոզուբովն ինձ հեռագիր ուղարկեց. «Պահպանել այգիները» [բովանդակությամբ]: Ես զեկուցեցի, որ ոչ քաղաքում և ոչ էլ շրջակայքում չկա ոչ մի ծառ:

Քաղաքը գրեթե դատարկ էր: Կային ոչ մեծ թվով ատրիներ ու հայեր, ավելի շատ առաջինները: Սարայում մնացել էր թուրքական բանակի հայ զինվոր, որը մեզ տեղեկություններ տվեց հակառակորդի մասին: Նա հայտնեց, որ հետևակն ու հեծելագործը հեռացել են գիշերը, մեր զորքերի Շարալխանե գալու օրը: Հակառակորդն ուղղվել է Արձակ ու Խոշաբ գյուղերը (երկու ճանապարհներն էլ տանում են Վան): Խոշաբ գյուղի մոտ կենտրոնացվել են զգալի ուժեր: Այդ ուղղություններով ուղարկվեցին ուժեղացված պարեկախմբեր՝ մինչև հակառակորդի հետ բախվելը:

Անձնատուր եղած հրամանատարների հսկողությունը իմ կողմից դրված էր Հայկական դրուժինայի վրա, որպեսզի դա կատարվի նրանց համար անսկատ: Երեկոյան նրանց հետ բանակցություններ վարեցի ու մենք եկանք հետևյալ համաձայնության՝ նրանք որպես պատանդներ մնում են մեզ մոտ, ու նրանց գյուղերի բնակիչները պետք է մեզ հանձնեն իրենց գենքը: Ձենքը հանձնելու համար նրանք ինձ գրություններ տվեցին իրենց ստորագրություններով: Ես հանձնարարեցի Սունժեյան կազ. գնդի խորունժի<sup>84</sup> գերագանց սպա Մերեքոյակովին՝ վստահելի հսկողությամբ նրանց [բեկերին] ուղարկել ք. Դիլմանից ժամանակավորապես գ. Խանիկ տեղափոխված գեն. Չեռնոզուբովին:

Մինչև ես շարժվում էի ք. Սարայ, Ադրբ. ջոկատի պետի կողմից Խանասորի լեռնանցքում իմ կողմից թողած 8-րդ գնդի 2 վաշտերը և Պոլտավյան կազ. գունդը հրամանատար, գնդապետ Նալգինի<sup>85</sup> հրամանատարությամբ, Դերիկով (Սբ. Բարդուղիմեոսի վանք) շարժվեցին ք. Բաշկալե: Այս վանքի մոտ ջոկատը մարտ է ունեցել և հակառակորդի նահանջից հետո շարժվել դեպի ք. Բաշկալե, գրավել այդ քաղաքը և այնտեղ որպես կայազոր թողել մեկ վաշտ ու կազակային մեկ հարյուրյակ՝ վաշտային ավագ հրամանատարի ղեկավարությամբ:

[Նոյեմբերի] 20-ին սունժեցիները Արձակ տանող ճանապարհին Մոլլա Հասան գյուղի մոտ գերեցին 14 հոգուց բաղկացած թուրքական սպայական հեծելապարեկը: Այդ սպայի<sup>86</sup> հարցումվորձից որևէ նոր բան չպարզվեց՝ միայն այն, որ Խոշաբում գտնվող ջոկատի գլուխ կանգնած է Ջևդեթ բեյը<sup>87</sup>: Հեծելապարեկ սպայի հետ ուղարկեցի Ադրբեջանական ջոկատի պետին:

Ցանկանում էի օգտվել անդորրից, որպեսզի կապիտան Հովսեփյանցը [Հայկական] դրուժինային ծանոթացնի ինչպես հարձակման, այնպես էլ պաշտպանության ժամանակ մղվող մարտական գործողություններին, սակայն Անդրանիկը վիրավորվեց ու հպարտ մերժեց, գտնելով, որ դրա համար դրուժինան լավ է նախապատրաստված: Ընդհանրապես նրա՝ Անդրանիկի մեջ կար շատ ինքնավստահություն և հպարտություն:

Իմ ջոկատի առաջախաղացումը մեր հենակետից ինձ համար անհասկանալի էր: Ջոկատի դրությունը անվտանգ չէր: Շուրջ բոլորը թշնամաբար տրամադրված քրդական գյուղեր էին: Ես կարծում եմ, որ ջոկատի դրությունը քիչ թե շատ տանելի էր միայն այն պատճառով, որ մեզ մոտ որպես պատանդներ գտնվում էին համիդ. գնդերի հրամանատարները: Նրանց ազդեցությունը բնակիչների վրա ահռելի էր: Նրանք հայերին շատ լավ էին վերաբերվում: Եվ պետք է խոստովանել, որ այդ ժա-

84 Կրտսեր սպայական կոչում կազակային զորքերում, որը հավասարագոր է ներկայիս լեյտենանտի կոչմանը:

85 Նալգին Էլբերտ Ամուրգինի (1863-1918), գեներալ-մայոր, ազգությամբ՝ ինգուշ, Պոլտավյան 1-ին կազակային գնդի հրամանատար:

86 Հավանաբար հեծելապարեկի հրամանատարին:

87 Ջևդեթ բեյը Վանի նահանգապետն էր, ռազմական նախարար էնվեր փաշայի քրոջ ամուսինը: Հայտնի էր իր չարագործություններով և «Բաշկալեի պայտագործ» մականունով, քանի որ հրամայել էր պայտել զոհերին: 1914 թ. վերջից և 1915 թ. սկզբից ղեկավարել է Վան նահանգի հայության զանգվածային կոտորածները և Վան քաղաքի հայկական թաղամասերի պաշարումը: Հետագայում կազմակերպել է Բաղեշի հայության կոտորածը:

մանակի ընթացքում կոտորած ու ջարդ չի եղել<sup>88</sup>: Հետո թիկունքում Շարապյանն, Ռիզե և Կոթուր գյուղերում թողնվեցին փոքրաթիվ զորամասեր (զորահանգրվանակետի սանն): Շատ ծանր էր հեռախոսավարների<sup>89</sup> վիճակը: Նրանք ողջ ժամանակ պետք է աշխուրջ լինեին, քանի որ քրդերի հատուկներն հարձակումները տեղի էին ունենում նրանց ու գումակի վրա: Պարենը բերվում էր ուղտերով Սալմաստից, ապա ք. Խոյից: Եվ երբ եկավ համբարակի ներկայացուցիչը, հացը սկսեցին թխել Սալմաստում և պարենի մի մասը ձեռք էր բերվում շրջակա գյուղերից: Միսը ու մյուս մթերքները բերում էին կապալառուները:

Ք. Սարայ գալու հաջորդ օրը ես զորամասերի պետերի հետ դիտեցի տեղանքը, ընտրեցի դիրքը ու հրամայեցի այն ամրացնել խրամատներով: Մեր 4-րդ լբանակային կորպուսի և Ադրբեջանական ջոկատի գործողությունների վերաբերյալ ինձ ոչինչ հայտնի չէր: Ք. Բաշկալեի գրավման մասին ես պատահաբար տեղեկացա: Հավանաբար գեներալ Չեռնոզուբովը չգիտես ինչու նպատակահարմար չէր գտնում ինձ տեղյակ պահել<sup>90</sup>: Գիտեի, որ մեր ջոկատը հարձակվում է Ալաշկերտի հովտով և որ գեն. Նիկոլանը<sup>91</sup> կանգնած է Հին Բայազետում:

Կարճ ժամանակում մեզ հաջողվեց 7 գյուղերից ստանալ շուրջ 3000 հրացան: Սկզբում բնակիչները պատրաստակամությամբ էին հանձնում, սակայն երբ իրավիճակը փոխվեց ոչ մեր օգտին՝ սկսեցին խուսափել հանձնելուց:

Այդ ժամանակ Սարայ եկան հեծյալ հայ կամավորներ՝ մոտ 100 հոգի (ուսանողներ Մոսկվայից, Լենինգրադից<sup>92</sup> ու երիտասարդներ Ամերիկայից<sup>93</sup>) հայ գործիչներից մեկի՝ Ջամալյանի<sup>94</sup> ղեկավարությամբ: Այդ ժամանակ Անդրանիկն իր դրուժինային կից կազմակերպեց առանձին հատուկ հեծելաջոկատ:

Շուտով ես գեն. Չեռնոզուբովից կարգադրություն ստացա՝ եթե Անդրանիկը կցանկանա շարժվել դեպի Վան՝ թույլ տալ, նրան հանձնելով 2 լեռն. թնդանոթ, սակայն, ցավոք իրադրությունը սկսեց փոխվել: Հակառակորդը սկսեց ակտիվություն ցուցաբերել ու կանաց-կանաց կուտակվել Արձակ-գյուլ լճի կողմից, ուստի ես նպատակահարմար չգտա նման իրավիճակում թույլ տալ դրուժինային գնալ [Վան]:

Այդ զեկույցների հիման վրա ես հարկադրված էի Ասուրիի գյուղ ուղարկել Հայկական դրուժինան, սունժենցիների երկու հարյուրյակ ու 4 լեռն. թնդ. գնդապետ Ջենցովի ղեկավարությամբ: Այդ գյուղը գտնվում էր դեպի Արձակ-գյուլ լիճ ու Խոշաբ գյուղ տանող խճուղային ճանապարհների խաչմերուկում:

Այդ ժամանակ ես կրկին խիստ զարմացա, երբ գեն. Չեռնոզուբովը կրկին ինձ մոտ՝ ջոկատ ուղարկեց համիդ. գնդերի հրամանատարներին: Անհասկանալի է, թե նա այդ դեպքում ինչով էր ղեկավարվում, գուցե տնտեսական նկատառումներով: Նման դեպքերի համար կար կանխավձար, սակայն ինձ մոտ չկար որևէ միջոց, բացի այդ ես գտնում էի, որ նրանց մնալը ջոկատում, նման իրավիճակում, որում

88 Հավանաբար գեներալ Թ. Նազարբեկյանը տեղյակ չէր, որ այդ նույն ժամանակ՝ 1914 թ. նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին, Կարսի և հատկապես Բաթումի մարզերում օսմանյան բանակի ստորաբաժանումների կազմում գործող մարդապահների ջոկատները, այդ թվում տխրահռչակ «Թեշքիաթը Մահսուսեն», տեղի մահմեդականների զգալի մասի օժանդակությամբ իրականացնում էին հայերի կոտորածներ: Քրդերին զսպում էր միայն ու միայն ռուսական զորքերի ու Հայկական 1-ին կամավորական խմբի ներկայությունը: Իրավիճակը փոխվեց, երբ սկսվեց ռուսական զորքերի նահանջը, որը կապված էր Սարիղամիշի շրջանում ընթացող մարտական գործողությունների հետ:

89 Կապավորներ:

90 Գեներալ Ֆ. Չեռնոզուբովի ունեցած տվյալների համաձայն՝ Թ. Նազարբեկյանի շտաբում գործում էր թուրքական լրտես, ուստի նա չէր ցանկանում բացահայտել ռազմական այս կամ այն գործողության հետ կապված մանրամասները: Չնայած կասկածներին՝ այդպես էլ հայտնի չդարձավ, թե ով էր այդ լրտեսը:

91 Նիկոլան Ադրեյ Միխայիլի (1858-1926), գեներալ-լեյտենանտ (1915 թ.), Անդրկասպյան կազակային դիվիզիայի (Բայազետյան ջոկատ) հրամանատար:

92 Պետրոզարալ:

93 1915 թ. դեկտեմբերի 20-ի նամակում Մինոն Վրացյանը դժգոհություն էր հայտնում ԱՄՆ-ից ժամանած որոշ կամավորների պահվածքից: Նրանց թվում կային արկածախնդիրներ, որոնք նույնիսկ Թիֆլիս չհասան, որպեսզի ընդգրկվեն կամավորական խմբերում, տե՛ս Ա Ա Ա, ֆ. 1267, ց. 4, գ. 14, թ. 7:

94 Ջամալյան Արշակ (1882-1940), հասարակական-քաղաքական ու պետական գործիչ, ՀՅԴ անդամ: Կամավորական շարժման կազմակերպիչներից ու ղեկավարներից:

գտնվում էր՝ անհնար է: Մի քանի օր անց նրանց հետ ուղարկեցի, իմ որոշումը պատճառաբանելով նրանով, որ նրանց ներկայությունը ջոկատում համարում եմ ոչ հնարավոր, բացի այդ, շատ դժվար է երաշխավորել, որ նրանք կապված չէին յուրայինների հետ: Հետագայում ինձ հայտնեցին, որ գեն. Չեռնոգուբովը չցանկանալով նրանց իր մոտ պահել՝ ուղարկել էր Մակուի խանություն, որտեղից էլ նրանք փախել էին:

Հակառակորդը օրեցօր թվապես ավելանում էր՝ ավելի համարձակ դառնալով և աստիճանաբար մոտենում էր մեր դիրքերին: Ջոկատը մի փոքր հրետ. նախապատրաստությունից հետո անցավ հարձակման, գրավեց Ասպինսակ ու Մոլլա Հասան գյուղերը, սակայն հետագայում հաջողություն չունեցավ ջոկատի հրամանատարի անվճռականության պատճառով:

[Նոյեմբերի] 28-ին ես ուղարկեցի օգնական ուժ՝ 6-րդ հրաձ. գնդի գումարտակը, և այդ ջոկատի պետ նշանակեցի փոխգնդ. Ախվլեդիանիին, իսկ գնդապետ Ջենցովին հետ կանչեցի: Գիշերվա ընթացքում հակառակորդի ուժերը խիստ կերպով ավելացան, որի մասին այդ գիշերը զեկույց ստացվեց: Հակառակորդին վերջ տալու համար ես որոշեցի Սարայում թողնել մեկ գումարտակ, Մունժ. 2 հարյուրյակ և 4 լեռն. թնդանոթներ, իսկ մնացած ուժերով արշալույսին առաջանալ ու վճռականորեն գործել: Այդ մասին տեղեկացրի առաջապահ ջոկատի պետին: Հաջողության գլխավոր երաշխիքը պետք է հանդիսանար մեր հրետանին: Սակայն, [նոյեմբերի] 29-ի ու 30-ի ուժեղ մառախուղը խանգարեց ինձ այդ իրականացնել: Այդ երկու օրերի ընթացքում հակառակորդի ուժերն այնքան ավելացան, որ ես առաջապահ ջոկատի պետից սկսեցի ստանալ տագնապալի տեղեկություններ: [Նոյեմբերի] 30-ին եկավ կապիտան Հովսեփյանցը և զեկույցեց նույնը, սակայն, ըստ նրա խոսքերի, որևէ առանձնահատուկ վտանգ չէր սպառնում: Երեկոյան փոխգնդ. Ախվլեդիանին կանչեց իմ շտաբի պետին ու խնդրեց ինձ զեկույցել, որ հակառակորդը կենտրոնացրել է մեծ ուժեր և հավանաբար նախապատրաստվում է անցնել հարձակման: Այդ մասին նրան նույնպես տեղեկացրել էին փախստական հայերը: Այդ զեկույցի ժամանակ ինձ զեկույցեցին, որ եկել է հայ քահանա, որը ցանկանում է շտապ ինձ տեսնել: Ես նրան ընդունեցի, և նա ինձ հայտնեց, որ Սարայից հյուսիս կենտրոնացվում են քրդերի ու ասկյարների<sup>95</sup> մեծ ուժեր, որպեսզի հարձակվեն դեպի Կոթուր և Բելաջիկ գյուղ[երը], կտրեն մեր նահանջի ճանապարհը:

Ցանկանալով ստուգել ջոկատի հրամանատարի զեկույցի իսկությունը ես հեռախոսի մոտ կանչեցի Անդրանիկին ու հարցրեցի, թե ըստ նրա որքան կարող են լինել հակառակորդի ուժերը: Նա ինձ զեկույցեց, որ իր կարծիքով 25-ից 30 հազար, հրետանիով (4 թնդանոթ):

Երկարատև տատանումներից հետո, ծանր ու թեթև անելով այդ բոլորը՝ հակառակորդի մեծ թվաքանակը, հրամանատարական կազմի ընկձված տրամադրությունը, իսկ ամենագլխավորը՝ թիկունքի բացարձակապես անապահով լինելը և իմ նահանջի ճանապարհը փակելը, ես կարգադրեցի գիշերը ուղարկել գումակը, հացի փուռը և առաջապահ ջոկատին նահանջել Կոթուր, իսկ դեկտեմբերի 1-ի առավոտյան սկսեցին նահանջել նաև գլխավոր ուժերը Շարապխանե գյուղը, նախապես առաջ թողնելով Ասուրլիից ժամանած առաջապահ ջոկատը: Հակառակի պես հիասքանչ եղանակ էր, սակայն ուժեղ սառնամանիք էր: Ուղտերի գումակը պաշտպանում էր Հայկական դրոժինան, որը ստիպված էր այդ օրն առանց հանգստի անցնել 50 վերստ (Ասուրլի գյուղից մինչև Կոթուր): Քաղաքի [Կոթուրի] ասորի բնակիչներն իրենց եպիսկոպոսի հետ և հայերը նույնպես լքեցին քաղաքը մեզ հետ: Չնայած իմ արգելքին շատերը հրդեհեցին տներն ու գորանոցները: Իմ լտանլտերը նույնպես հրդեհեց իր տունը: Հակառակորդը հետևում էր մեզ և գրավեց քաղաքը: Ջոկատը գիշերեց Շարապխանե գյուղում: Հաջորդ օրը շարունակեցինք նահանջել: Եղանակն այն աստիճանի պարզ էր, որ Մանա-Մուվան լեռից երևում էր Վանա լիճը: Մոտե-

<sup>95</sup> Ասկյար՝ թուրք զինվոր:

նալով Կոթուրի կիրճին՝ ես առանձնացրեցի ջոկատից 7-րդ և 5-րդ գնդերի գումարտակները ու սունժենցիների 2 հարյուրյակ գնդապետ Զենցովի հրամանատարությամբ ու նրան հրամայեցի գրավել Գարատել գյուղը և այդ գյուղի մոտ գտնվող բարձունքը, իսկ մնացած ջոկատին շարժվել Կոթուրի կիրճով:

Հայկական դրուժինան ուժասպառ անցումից ու մեր նահանջի հետևանքով բարոյական տառապանքներ ունենալուց հետո, ժամանակավորապես շարքից դուրս էր եկել: Ի գորու չէր նույնիսկ գլխավոր ուժերի առջևում պահակ կարգել: Իհարկե, մեղքի գլխավոր պատճառը Անդրանիկն էր: Նա վարչունակ մարդ չէր, անհավասարակշիռ էր՝ բռնապետական բնավորությամբ, իր զինվորական հասկացություններով իրեն համարում էր բոլորից վեր ու չէր կարողանում ենթարկվել ուրիշներին: Չգիտես թե ինչու առայժմ ընդունում էր միայն իմ հեղինակությունը: Կապիտան Հովսեփյանցը ստիպված էր գիշերը մի քանի տասնյակ դրուժինիկներով դուրս գալ ու գրավել կարևոր լեռը: Ես ցանկանում էի այդ դեպքի մասին զեկուցել ղեկավարությանը, սակայն Յակով Քրիտափորի Զավրիևը խնդրեց սպասել մի քանի օր, որովհետև համոզված էր, որ Անդրանիկը և դրուժինան կրկին մարտունակ կլինեն: Ես հարգեցի նրա խնդրանքը և իսկապես համոզվեցի, որ Զավրիևը իրավացի էր:

Հակառակորդը գրավեց Բելաջիկ գյուղը (այնտեղ թուրքական սահմանապահ պահակակետ կար): Այդ գյուղը Ռագի գյուղի գծի վրա էր, Կոթուրի կիրճից ձախ: Այդ գյուղի դիմաց իմ կողմից ուղարկվեց 6-րդ հրաձգ. գնդի գումարտակը գումարտակի հրամանատար փոխգնդ. Ախվլեդիանիի հրամանատարությամբ:

Դեկտեմբերի 4-ին հակառակորդն աջ թևով անցավ հարձակման ու ետ մղեց մեր զորամասերը Գարատել գյուղից: Ջոկատի դրությունն էլ ավելի ծանր դարձավ: Ստիպված էինք գրեթե ողջ ջոկատով ուժեղ սառնամանիքների պայմաններում գտնվել բաց երկնքի տակ: Նահանջելու համար ես առանձնապես որևէ հիմք չէի տեսնում: Դա վերագրում էի ջոկատի հրամանատար գնդապետ Զենցովի անվճռականությանը:

Դեկտեմբերի 5-ին ջոկատի հրամանատար [նշանակեցի] 7-րդ հրաձգ. գնդի հրամանատար, գնդապետ Օբրագովին ու հրամայեցի հետ մղել հակառակորդին իր նախկին դիրքերը ու վերադարձնել Գարատել գյուղը: Այդ խնդրի հաջողությունը ապահովելու համար ես նրա հետ պայմանավորվեցի, որ դեկտեմբերի 5-ի երեկոյան մարտկոցը կտեղակայեմ Գերի-Գորան լեռան վրա (այդ լեռը գերիշխում էր ողջ տեղանքի վրա) ու Գարատել գյուղի վրա նշանափորձ կրակ կվարի, իսկ գիշերը կրակ կբացի գյուղի վրա ու կստիպի հակառակորդին դուրս գալ գյուղից: Դա ձշտությամբ կատարվեց: Հակառակորդը ողջ գիշերը սառել էր: Գնդ. Օբրագովն անցավ հարձակման, դուրս մղեց հակառակորդի մնացորդները Գարատել գյուղից և շարտեց նրան իր հին դիրքերը: Ցավոք, նա հարձակման անցավ միայն իր ձախ թևով, իսկ աջին չկարգադրեց միաժամանակ անցնել հարձակման: Մեր տեղամասի աջ թևի պետ փոխգնդ. Ախվլեդիանին սեփական նախաձեռնությամբ չհամարձակվեց դա կատարել: Այդ ժամանակ [դեկտեմբերի] 7-ին ես կարգադրեցի այդ գումարտակին դուրս մղել հակառակորդին Բելաջիկ գյուղից: Գյուղը գտնվում էր խորը կիրճում: Կիրճը լայն էր: 6-րդ հրաձգ. գնդի գումարտակը գրավեց գահավեժ գառիվայր բարձունքները, սակայն սահմանափակվեց միայն հրաձգությամբ՝ համազարկով, ցավոք կրակոցներն իրենց նպատակին չէին հասնում: Տեսնելով հրաձիգների անվճռականությունը՝ ես այդ առաջադրանքը հանձնարարեցի Անդրանիկին (երկու օրերի ընթացքում դրուժինան հանգստացել էր, նաև Անդրանիկը խաղաղվել էր): Դրուժինիկներն առանց հրաձգության անցան հարձակման: Տեղանքին լավ ծանոթ լինելով (նրանց թվում կային մի քանի հոգի այդ վայրից)՝ նրանք ճարակորեն անցան հարձակման: Զարմանալի էր, թե ինչպես նրանք ճարակորեն հարմարվում էին գրեթե անմատչելի տեղանքին՝ ուղղակի գլորվելով կամ ձիշտն ասած՝ սահելով գահավեժ լեռան խոր ձնով լի ձորը ու կուտակվելով անցան հարձակման և դուրս մղեցին հակառակորդին գյուղից ու մերձակա բարձունքներից:



Այս բոլոր մարտական գործողություններից հետո հակառակորդը հանդարտվեց ու նահանջեց Կավելիի գյուղ, Կագ-գյոլ լճի ու Կենավեն-Գյադուկ լեռնանցքի գիծը: Այս դրության մեջ ջոկատը մնաց մինչև [դեկտեմբերի] 20-ի կողմերը: Երբեմն հակառակորդը, կուսակազմով իր սահմանապահ զորանոցներում, փորձում էր շրջանցել մեր թևերը, անհանգստացնել մեզ, սակայն դա նրան չէր հաջողվում: Նա միշտ ստանում էր արժանի հակահարված: Որպեսզի դրան վերջ տրվի՝ ես հրամայեցի կազակներին ոչնչացնել զորանոցները:

Այդ ժամանակ ք. Բաշկալեն գրաված 2 վաշտերը և հարյուրյակը ստիպված էին մարտով թողնել այդ քաղաքը ու նահանջել Խանասորի լեռնանցք: Կայագորի հրամանատար նշանակվել էր վաշտի հրամանատարներից մեկը, որը սակավ փորձառու էր: Նա անհրաժեշտ միջոցառումներ չէր ձեռնարկել պահպանության համար, բնակիչները՝ հրեաները դրանից օգտվելով տեղեկացրեցին հակառակորդին: Գիշերը հակառակորդը գրավեց գերիշխող բարձունքները և առավոտյան կրակ բացելով անցավ հարձակման:

[Դեկտեմբերի] 20-ի կողմերը Ադրբ. ջոկատի պետ գեն. Չեռնոզուբովից ստացա տագնապալի հեռագիր, որտեղ հաղորդվում էր Սարիղամիշյան<sup>96</sup> իրադարձությունների մասին և հրամայվում էր նահանջելու նախապատրաստվել: Այդ հանգամանքը ճշմիչ ազդեցություն ունեցավ բոլորի վրա: Ես կանչեցի Ցակով Քրիստափորի Զավրիևին, որի միջոցով կապ էի պահպանում դրուժինայի հետ ու ծանոթացրեցի հեռագրի բովանդակությանը: Նա այնքան վշտացավ այդ նորությամբ, որ նրա աչքերին արցունքներ հայտնվեցին: Ես սկսեցի նրան հանգստացնել ու ասացի, որ առայժմ չպետք է հուսահատվել: Նա ինձ պատասխանեց. ինչպես չվշտանալ, երբ որ ինքն իր ողջ կյանքը նվիրել է հայ ժողովրդի ազատագրությանը, և այժմ ամեն ինչ փլուզվում է, քանի որ կովկասյան ղեկավարությունը անուշադրության մատնեց իր տեղեկությունները հակառակորդի մեծաքանակ ուժերի մասին: Այնուամենայնիվ ձգտում էի նրան հանգստացնել՝ ասելով, որ հույս ունեմ, որ մեր անհաջողությունը կհաղթահարվի: Հատկապես ճշմված վիճակում էին Անդրանիկը, նրա օգնականները և դրուժինիկները: Նրանք շրջում էին ուրվականների նման ու չգիտեին, թե ինչ անեն: Իմ բոլոր հորդորներն ապարդյուն էին: Մի քանի օր անց հեռագիր ստացվեց, որում հաղորդում էին, որ Սարիղամիշի մոտ վտանգն անցել է: Երբ ես այդ մասին հաղորդեցի Զավրիևին ու դրուժինիկներին՝ նրանք մեծ ուրախություն ապրեցին:

Հետագայում մենք իմացանք, թե ինչ վտանգի էր ենթարկվում Կովկասը թուրքական օպերացիայի հաջողության դեպքում: Իրականությունը հետևյալն էր. պատերազմ հայտարարելուց հետո Էնվեր փաշայի ղեկավարությամբ զգալի թվով զորքեր կենտրոնացվեցին Էրզրումի մոտ՝ շուրջ 5 [բանակային] կորպուսներ: Թուրքերը դիտավորյալ թույլ տվեցին, որպեսզի մեր զորքերը խորանան իրենց երկրի խորքը, և որից հետո Էնվերը սկսեց իր պլանի իրագործումը<sup>97</sup>: Ուղարկվեցին ևս երկու [բա-

96 Էնվեր փաշան նախաձեռնել էր հարձակողական շրջանցիկ գործողություն՝ հաշվի չառնելով տեղանքը, կլիմայական պայմանները, թիկունքային ապահովությունը, կապը և այլն: Սարիղամիշի մոտ տեղի ունեցած ծակատամարտում (1914 թ. դեկտեմբերի 9-1915 թ. հունվարի 4) ռուսական բանակը գեներալ Նիկոլայ Յուդենիչի հրամանատարությամբ, գլխովին ջախջախեց օսմանյան 3-րդ բանակային կորպուսը: Ինչպես վկայում է օսմանյան բանակում ծառայության անցած գերմանական բանակի կապիտան, հետագայում գեներալ, ծագումով վենետուկացի Ռ. դե Նոգալեսը՝ Էնվերը «փորձում էր Նապոլեոն խաղալ», որի համար էլ ձախողեց օպերացիան, տե՛ս **R. de Nogales**. Four Years beneath the Crescent. Transl. from the Spanish by M. Lee. With an introd. by Lieut.-Colonel E. Davis. N. Y., London, 1926, p. 25): Արդյունքում թուրքական 90-հազարանոց զորքից ողջ մնաց միայն 12 հազարը: Ռուսների կորուստը կազմել էր 26 հազար սպանված, վիրավոր և ցրտահարված:

97 Գերմանացի ռազմական հրահանգիչները, որոնք մասնակցել էին օպերացիայի պլանի մշակմանը, քաջ գիտենալով թուրքական բանակի մարտական պատրաստակամության մակարդակը, նախապես առաջարկում էին չլիմել հարձակողական գործողությունների, այլ նահանջել Սերաստիա՝ ռուսներին հրահրել ակտիվ գործողությունների: Բայց Էնվերին հաջողվեց համոզել գերմանացիներին ու անցնել իր պլանի իրականացմանը, թեև գերմանացիների առաջարկած տարբերակն ավելի իրատեսական էր, տե՛ս **W. E. D. Allen, P. Muratoff**. Caucasian Battlefields: A History of the Wars on the Turco-Caucasian Border, 1828-1921. Cambridge, 1953, p. 250.

նակային] կորպուսներ. որոնք շրջանցելով մեր դիրքերը Բարդուսով դեպի Վերին] Սարիղամիշ և բացի այդ, նշանակալից ուժերով հարձակում սկսվեց ճակատի վրա և Օլթիով՝ Արդահան: Անկասկած, հաջողությունը կլիներ ահռելի, եթե անսպասելի սկսած ձմեռն իր սարսափելի ձյունամրրիկներով (զարմանալի է, թե ինչպես այդ հանգամանքը հաշվի չէին առել թուրքերը՝ լավ իմանալով երկրի կլիմայական պայմանները) բացարձակապես անմարտունակ դարձրեց շրջանցիկ շարասյունը: Արդյունքում թուրքերը լիակատար պարտություն կրեցին: Ոչնչացվեցին թուրքական 2 [բանակային] կորպուս՝ 9-րդ և 10-րդ: Գերվեցին 9-րդ կորպուսի հրամանատարը<sup>98</sup>, 17-րդ, 18-րդ և 29-րդ դիվիզիաների պետերը, դիվիզիայի 2 հրամանատարներն իրենց շտաբներով, 100-ից ավելի սպաներ ու հազարավոր ասկյարներ: Մեծ թվով ասկյարներ մահացան շրջանցիկ գորսայունում ձյունամրրիկի հետևանքով:

Սարիղամիշյան մարտերը ցույց տվեցին, որ Կովկասյան [ռազմական] օկրուգի շտաբը բացարձակապես տեղյակ չէր հակառակորդից, նրանից ավելին՝ [Կովկասյան] 1-ին բանակի կորպուսի շտաբը, որը պատերազմի հայտարարման օրվանից մինչև էնվեր փաշայի հարձակումը մարտական գործողություններ էր իրականացնում այդ ձակատում<sup>99</sup>:

Ցավոք գեն. Միշլանսկին և [Կովկասյան] օկրուգի շտաբը անուշադրության մատնեցին հուլիսին հայերի կողմից տրված տեղեկությունները: Շտաբը նույնիսկ ջանք չթափեց այդ տեղեկությունները ստուգելու համար: Այս մեծ պատերազմը, իհարկե, սպասելի էր, ոչ մի կասկած չկար, թե ում կողմը կլինեն թուրքերը: Ռուսաստանը չէր կարող հուսալ, որ նա կարող է իր դարավոր թշնամու կողմը լինել: Լավ հայտնի էր, թե ինչ ուժեղ մասնակցություն է ունենում Գերմանիան թուրքական գործերի պատրաստության մեջ: Սակայն, ցավոք, մենք միշտ էլ արհամարհաբար էինք վերաբերվում թուրքական ուժերին ինչպես եղել է [18]28<sup>100</sup>, [18]54<sup>101</sup>, [18]55<sup>102</sup>, և [18]77- [18]78<sup>103</sup> թվականներին, երբ բավական էր մեր մեկ զինվորը թուրքական 3-ից 4-ի դեմ: Արդեն [18]77 և [18]78 թթ. մեզ ակնհայտորեն ցույց տվեցին մեր կարծիքի սխալ լինելը: Մենք մեր գործողությունները միշտ սկսել ենք թույլ ուժերով, իսկ հետո ստիպված էինք համալրել, որի համար գնում էինք մեծ ծախսերի, և օպերացիաները ձգձգվում էին: Եթե Կովկասյան բանակի խնդիրը բացարձակապես պաշտպանական էր, ուստի պետք չէր Սարիղամիշյան դիրքերից այն կողմ գնալ, սակայն հարձակողական պատերազմը մեզ տալիս էր բոլոր առավելությունները՝ Փոքր Ասիայում միշտ էլ ունեցել է բարոյական գերազանցություն պաշտպանականի նկատմամբ: Բացի այդ, Թուրքահայաստանի<sup>104</sup> հողերը գրավելով մենք կզրկեինք Թուրքիային օգնություն ստանալ Բալկաններից, քանի որ նա իր գործերի պաշարները հիմնականում համալրում էր Աս. Թուրքիայից, ինչպես նաև ստանալ այդ վայրերից կենսական պաշարներ, բացի այդ հնարավորություն կտայինք դաշնակիցներին օպերացիաներ կատարել Բաղդադի շրջակայքում և Միջագետքում փոքրաթիվ ուժերով: Ես խորապես համոզված եմ, որ մեր առաջխաղացումը փոքրասիական Թուրքիայում՝ Սև ծովի ափի գրավումով, ազդեցություն կունենային նաև

98 9-րդ բանակային կորպուսի հրամանատարն էր Ալի Իսհան փաշան (1882-1957): Նրան ուղարկեցին հեռավոր Չիտա քաղաքը, որտեղից 1915 թ. ամռանը տեղի թուրք-թաթարական ընդհատակյա կոմիտեի օգնությամբ կարողացավ փախչել և վերադառնալ Թուրքիա ու շարունակել կռիվը Միջագետքում, այս անգամ բրիտանացիների դեմ:

99 1-ին կորպուսի հրամանատարն էր հեծելազորի գեներալ Գետրգի Բերխմանը, որը ստանալով մի շարք հետախուզական տեղեկություններ, որոնցից մեկն էր Հայկական 4-րդ կամավորական խմբի հրամանատար Քեռու զեկուցագիրը թշնամական գերակշիռ ուժերի մասին, դրանց հավատ չընծայեց: Ինչպես նշում է գեներալ Նիկոլայ Կորսունը. «Իրականում դրանք թուրքական 28-րդ հետևակային դիվիզիայի ուժերն էին, որոնք հարձակվում էին Կոչգանիսի վրա», տե՛ս **Корсун Н. Г.**, Сарыкамышская операция на Кавказском фронте мировой войны в 1914-1915 гг., Москва, 1937, с. 39, **Масловский Е. В.**, указ. соч., с. 82.

100 Նկատի ունի 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմը:

101 Նկատի ունի 1853-1856 թթ. Արևելյան կամ Ղրիմի պատերազմը:

102 Նույնը:

103 Նկատի ունի 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը:

104 Արևմտյան Հայաստան:

դաշնակիցների Գալիպոլիի օպերացիայի<sup>105</sup> վրա: Ինչպիսի սարսափելի հետևանքներ կունենար մեզ համար, եթե Էնվերի օպերացիան հաջողվեր: Այն պայթուցիկ նյութը, որը գտնվում էր թիկունքում՝ Կովկասում, հանձին մահմեդական բնակչության, անմիջապես կուղղվեր մեր դեմ ու կմիանար թուրքերին: Չէ՞ որ թուրք գործակալները մինչև պատերազմի հայտարարումը դրան էին նախապատրաստել մահմեդականներին: Ես կարծում եմ, որ թուրքերի օպերացիան չէր սահմանափակվի միայն Կովկասով: Նրանք անվախ կարող էին առաջանալ Կուրան ու մեզ շատ աղետներ պատճառել: Ահա թե ինչպես սխալ էր գնահատել Կովկասյան ճակատը Գեր. Գլխավ. [հրամանատարը]<sup>106</sup>: Այստեղ, իհարկե, չէր լուծվում պատերազմի բախտը<sup>107</sup>, սակայն նա կարող էր զգալիորեն թեթևացնել այն դժվարությունները, որոնք հետագայում ստիպված էինք ուժերի մեծ վատնումով ու միջոցներով կատարել: Իմ կարծիքի ապացույցը կարող են հանդիսանալ այն բոլոր կարգադրությունները, որոնք կատարվեցին նրա կողմից, երբ նա դարձավ Կովկասյան ճակատի Գլխավոր հրամանատարը: Կովկասյան ճակատի ուժերը հասցվեցին մինչև 7 [բանակային] կորպուսների:

Սարիղամիշյան օպերացիայի ավարտից հետո ես ենթադրում էի, որ մեզ կթողնեն մեր դիրքերում, սակայն ես սխալվեցի: Դեկտեմբերի 23-ին ստացա հրաման իմ ջոկատով նահանջել ք. Խոյ: Ես նույն օրը հրամայեցի սկսել նահանջը՝ Հայկական դրուժինային թողեցի ինքնուրույն: Դրուժինայի պետ Անդրանիկը հոգալով Սալմաստի փախստականների մասին՝ իր հեծելազորը Ավոյի ղեկավարությամբ կարճ ճանապարհով այնտեղ ուղարկեց՝ այդ շրջանի հայ փախստականներին ք. Խոյ նահանջելու ժամանակ պաշտպանելու համար: [Դեկտեմբերի] 24-ին ես դուրս եկա իմ ջոկատով. նահանջի ճանապարհի ու շրջակա բոլոր գյուղերը քրդական էին:

Առաջին գիշերումն ունեցանք Ջերի գյուղում, իսկ երկրորդը քարուքանդ եղած Կազլանուղ գյուղում: Այստեղ ջոկատը հարկադրված էր գիշերել արշավային վրաններում, քանի որ կացարաններ չկային: Ճանապարհն անչափ ծանր էր, հատկապես ք. Խոյի մատույցներում անանցանելի ցեխ էր:

Դրուժինան Խոյում կանգ չառավ, այլ անցավ քաղաքից մի քանի վերստի վրա գտնվող Սարդավար գյուղը: Գյուղը հայկական էր: Բնակիչները նրանց սիրով ընդունեցին:

Գալով Խոյ ես ներկայացա Ադրբեջանական ջոկատի պետ, գեներ. Չեռնոգուբովին: Նա ինձ հանձնեց կարգադրություն՝ պատրաստ լինել Ջուլֆա նահանջել: Սալմաստից ձգվում էր փախստականների մեծ քանակություն, որոնք կանգ չառնելով ք. Խոյում՝ լուղղվում էին Ջուլֆա:

Հաջորդ օրը՝ դեկտեմբերի 27-ին, ինձ մոտ եկավ Յ. Ք. Ջավրիևը, որպեսզի կիսվի փախստականների [հետ կապված] դարդի մասին: Նա ինձ ասաց, որ ինքը դիմել է գեներ. Չեռնոգուբովին՝ խնդրելով դադարեցնել նահանջը, քանի դեռ Սալմաստի շրջանի փախստականները դուրս չեն եկել: Չեռնոգուբովը հարգել է նրա խնդրանքը ու այդ մասին թույլտվություն է խնդրել գեներ. Միշլանսկուց: Վերջինս մերժել է ու հրամայել քիչ մտածել փախստականների մասին և կատարել ռազմավարական առաջադրանքը: Թե ինչու՞մ էր կայանում այդ ռազմավարական առաջադրանքը, մեզանից ոչ մեկը տեղեկացված չէր, հայտնի էր, որ մեր նահանջը կապված է Սարիղամիշյան մարտերի հետ, բայց քանի որ վտանգն անցել էր՝ մենք շվարել էինք՝ ինչով է պատճառաբանվում նահանջը: Գիտեինք, որ կարգադրությունը ստաց-

105 Դարդանեյան կամ Գալիպոլյան օպերացիան (1915 թ. փետրվարի 15-1916 թ. հունվարի 6) անգլո-ֆրանսիական մարտական գործողություն էր Կ. Պոլիսը գրավելու և Օսմանյան կայսրությանը պատերազմից դուրս բերելու համար: Օպերացիան ձախողվել է:

106 Նկատի ունի Նիկոլայ Ռոմանովին:

107 Ինչպես ցույց տվեցին հետագա հետազոտությունները՝ Օսմանյան կայսրությունը հանդիսանում էր Քառյակ միության ամենաթույլ օղակը, որի պարտությունը կարող էր հանգեցնել ողջ խմբավորման ջախջախմանը: Նման քայլ նախաձեռնվեց Սևծովյան նավատորմի հրամանատար, ծովակալ Ալ. Կոլչակի կողմից 1917 թ. գարնանը, երբ նա նախապատրաստեց նեղուցների գրավման դեսանտային օպերացիան, սակայն նավատորմի ու բանակի «հեղափոխականացումը» ի դերև հանեց ծրագիրը:

վել է Թիֆլիսից՝ գեն. Միշլանսկուց, որը Սարիղամիշի տակ ծանր իրավիճակում լքել էր ռազմաձևակատը: Նա երկյուղել էր Կարսի երկաթուղիով գնալ, ուստի մեկնել էր Իգդիր, որտեղից էլ Թիֆլիս<sup>108</sup>:

Ես հարցրեցի Յ. Ք. Ջավրիևին՝ արդյո՞ք նա անձամբ ծանոթ է փոխարքային: Նա պատասխանեց, որ փոխարքան իրեն ճանաչում է: Այդ ժամանակ ես նրան խորհուրդ տվեցի անձամբ հեռագրել նրան՝ խնդրելով կասեցնել նահանջը մինչև փախստականների ետ քաշվելը, քանի որ նրանց դրությունն առանց զորքի [պաշտպանության] շատ ծանր կլինի: Նա տեղնուտեղը կազմեց հեռագիրը և այն կարդաց ինձ: Ես հավանություն տվեցի, և նա ուղարկեց:

[Դեկտեմբերի] 27-ին ես ջոկատով շարժվեցի Ջուլֆա, ուր հետևեց իր շտաբով գեն. Չեռնոզուբովը: Ողջ ճանապարհը բռնված էր փախստականներով: Փախստականների դրությունը ողբերգական էր: Մայրերն իրենց ուսերի վրա տանում էին իրենց երեխաներին, տղամարդիկ բեռնված ձիերով, ավանակներով, գունեշներով ու ցուլերով, մինչև գոտկատեղը ընկղմված ցեխի մեջ, տանջված, հագիվհազ էին առաջանում: Խոր հոգոցները, աղեկտուր ճիչերը հասնում էին մինչև մեզ: Կարծես նույնիսկ կենդանիներն էին զգում, որ դրությունը հուսահատական է: Ցուլերի և գունեշների տխուր բառայունը, ձիերի խրխնջոցը, ոչխարների մայոցը և վերջապես սայլերի անիվների սարսափելի ճռռոցը ծանր, սրտաձնլիկ ազդեցություն էին թողնում: Այս տանջանքները տեսնելով շատերիս աչքերին արցունք էր երևում: Կարևորն այն էր, որ այս դժբախտ փախստականների մասին որևէ հոգատարություն չկար: Նրանց տանջանքներն ավելի էին շատանում Խոյից մինչև Սարդավար գյուղը տանող ճանապարհի անանցանելի ցեխի հետևանքով: Դժբախտ փախստականները ուղղակի խեղդվում էին այդ ցեխում: Երեխաներին, ծերերին ու թույլ կանանց տառացիորեն քաշելով դուրս էին բերում ցեխից: Սիրահոժար օգնություն էին ցուցաբերում բոլոր զորատեսակները: Կազակներն իրենց ձիերին էին նստեցնում երեխաներին, իսկ գումակայինները՝ սայլերին, հրետ[անավորները]՝ փամփուշտ [տեղափոխող] երկանիվ սայլակներին: Տեղի էին ունենում մահվան դեպքեր, և դիակներն այդպես էլ մնում էին ցեխի մեջ: Մի կին նույնիսկ ծննդաբերեց փամփուշտի երկանիվ սայլակի վրա:

Նահանջող ջոկատը պաշտպանելու համար Խոյում մնացել էին 5-րդ հրաձգ. գունդը, մեկ լեռնային մարտկոց, 3-րդ հերթի Կուբանյան կազակային գունդը և հետևակ սահմանապահներ: Երեկոյան ես շտաբի հետ հասա Եվագլի զորահանգրվանակետին, որտեղ էլ հարկադրված էինք գիշերել: Այստեղ ևս կանգ առավ գեն. Չեռնոզուբովն իր շտաբի հետ, որին ես ներկայացա ու զեկուցեցի, որ ջոկատը հապաղում է, քանի որ իր հնարավորության սահմաններում աջակցում է փախստականներին: Նա [ցանկանում էր] ինձ իր մոտ թողնել գիշերելու համար, սակայն ես շնորհակալություն հայտնեցի ու գնացի ինձ հատկացված տեղը:

Ես դեռ չէի հասել ինձ [հատկացված կացարանի] մոտ, երբ հասավ հանձնակատարը ու զեկուցեց, որ ինձ կանչում է գեն. Չեռնոզուբովը: Ես գնացի նրա մոտ և երբ մտա, նա դիմեց ինձ հետևյալ խոսքերով. «Ֆոնա Իվանովիչ, ես ցավում եմ, որ Ձեզ պետք է վշտացնեմ՝ փոխարքայից հեռագիր է ստացվել չթողնել ք. Խոյը և Դուք ստիպված եք վերադառնալ»:

Ես նրան ասացի, որ շատ ուրախ եմ այդ հանգամանքի համար, քանի որ նման կերպով փախստականները կփրկվեն, իհարկե, լռելով փոխարքային Ջավրիևի ուղարկած հեռագրի մասին, որն անկասկած այդ կարգադրության պատճառն էր: Միայն նրանից թույլտվություն խնդրեցի այստեղ մնալ մեկ օր, քանի որ իմ զորա-

108 1914 թ. դեկտեմբերի 14-ին մուս բանակային հետախույզները կարողանում են ձեռք բերել թշնամու «Սարիղամիշ» օպերացիայի պլանը, որին գեներալ Ա. Միշլանսկին ծանոթանալով, փոխանակ համապատասխան հակազդող գործողություններ ձեռնարկի, խուճապահար, առանց տեղյակ պահելու Կովկասյան բանակի շտաբի պետ, գեներալ Ն. Յուդենիչին, ծլկեց Թիֆլիս: Նրա անսպասելի հայտնվելը փոխարքայության մայրաքաղաքում ահավոր խուճապ առաջացրեց: Այնուամենայնիվ, Միշլանսկին, մինչև իրեն պաշտոնից հեռացվելը, խստորեն հետևում էր, որպեսզի իր հրամանները նահանջի վերաբերյալ կատարվեն:

մասերը ուշ են գալու, հոգնած կլինեն փախստականներին օգնություն ցուցաբերելիս: Նա ինձ հարցրեց, թե Խոյում մնացած ջոկատը չի վտանգվի հակառակորդի կողմից: Ես այդ ժամանակ հեռախոսի մոտ կանչեցի 5-րդ հրաձգ. գնդի հրամանատար գնդապետ Դոկուչանին<sup>109</sup> ու հարցրեցի, թե նա կարող է մեկ օր ինքնուրույն մնալ մինչև իմ գալը: Նա պատասխանեց, որ կարող է, քանի որ հակառակորդը առանձին նշանակալից ակտիվություն չի ցուցաբերում:

Հաջորդ օրը գեներալ Չեռնոգուրովն ինձ թողնելով 7-րդ հրաձգ. ու Թամանյան կազմագնդերը և մեկ լեռնային մարտկոց՝ իր շտաբի հետ ուղղվեց ք. Ջուլֆա, իսկ հայկական դրուժինան՝ [տեղավորվեց] Նոր Ջուղայի մոտ գտնվող գյուղերում: Փախստականները հետևում էին այն ջոկատին, որը նահանջում էր Ջուլֆա:

[Դեկտեմբերի] 29-ին ես, 7-րդ հրաձգ. գնդով, մեկ լեռնային մարտկոցով և Թամանյան կազմագնդով ուղղվեցի ք. Խոյ, ուր հասա երեկոյան: Ես իմ շտաբի հետ տեղավորվեցի մեր հյուպատոսական տանը, որտեղ գտնվում էր 5-րդ գնդի հրամանատարը: Հյուպատոսը քաղաքում չէր: Նա հոկտեմբերին լքել էր քաղաքը: 7-րդ գունդը ցանկանում էր տեղավորվել այն շինություններում, որոնք խաղաղ ժամանակ զբաղեցնում էր 6-րդ հրաձգ. գունդը, սակայն պարզվեց, որ պարսիկները մեկ օրվա ընթացքում հասցրել էին քանդել շինությունները (այնքան մեծ էր պարսիկների ատելությունը մեր զորքերի նկատմամբ), ուստի ստիպված էինք զորքը տեղավորել մասնավոր տներում, որն այդ ժամանակ այնքան էլ հարմար չէր:

Հակառակորդի դիրքերը երկու տեղամաս էին զբաղեցնում՝ մեկը հարավում, որի կենտրոնը Դուզ-դաղ լեռանգագաթն էր, մյուսը Վանադույույի, որի կողքերում, մինչև Կոթուրի կիրճի մուտք մտնելիս Վարդո գյուղից մինչև Եզդոկան, լեռներ ու զառիվայրեր էին: Հակառակորդը բաղկացած էր կանոնավոր զորքից, համիդ. գնդերից և զինված քրդերից՝ թվաքանակը 25-ից 30 հազար էր:

Հարավային տեղամասի պաշտպանությունը դրված էր 5-րդ հրաձգ. գնդի հրամ., իսկ արևմտյանը՝ 7-րդ հրաձգ. գնդի հրամ. վրա: Յուրաքանչյուր գունդ մեկ գումարտակով զբաղեցնում էր տեղամասերը, իսկ երկու գումարտակ մնում էր իմ պահեստագրում՝ հյուպատոսական տան մոտ գտնվող շինություններում: Թամանյան կազմագնդին հանձնարարված էր դիտարկել աջ թևը, իսկ Կուբանյան կազմագնդին՝ ձախ թևը: Այդ դրության մեջ ջոկատը մնաց մինչև 1915 թ. հունվարի 1-ը:

Ակամա բոլորն իրենց հարց էին տալիս՝ ինչ անհրաժեշտություն կար թողնել մեր զբաղեցրած դիրքերը և գրավված տարածքները Սարիղամիշի տակ մեր դրության կարգավորումից հետո: Այդ կարգադրությունը, իհարկե, նպատակահարմար կլիներ, եթե թուրքերին հաջողվեր ջախջախել մեր գլխավոր ուժերը և ապա շարժվել դեպի Թիֆլիս: Ընդհանրապես, Ադրբեջանական ջոկատի կազմում երկու ամսվա ընթացքում ստացված շատ կարգադրություններն ինձ այնքան էլ հասկանալի չէին. այսպես, ջոկատների առաջխաղացումը Բաշկալե ու Սարայ քաղաքները, եթե օպերացիայի նպատակը ք. Վանն էր, ապա այն [օպերացիան] պետք էր նախապես մշակել, ապահովել թիկունքը և համաչափել քո ուժերը հակառակորդի հետ և ավարտել սկսած օպերացիան, իսկ ջոկատները գրավելով այդ քաղաքները չէին առաջանում: Ես կարծում եմ, որ այդ քաղաքների գրավումն ավելի շատ տպավորություն թողնելու համար էր: Կարելի է ենթադրել՝ ինչպես Ադրբեջանական ջոկատում, այնպես էլ օկրուգի շտաբում չկար թուրքերի դեմ պատերազմի դեպքում կազմված պլան, որի հետևանքով տեղի ունեցավ մեր ջոկատների անիմաստ թափառելը: Մենք ինչ արեցինք այդ երկու ամիսների մարտական գործողությունների ընթացքում: Ես պետք է խոր ցավով խոստովանեմ, որ անօգուտ կերպով կատարված անհայտ օպերացիաների համար անտեղի կերպով զոհել ենք մարդկանց և կրել ենք նյութական ու ֆիզիկական ուժերի մեծ ծախսեր:

Ի վերջո, հաջողության փոխարեն ստիպված էինք ազատել Ադրբեջանի հա-

109 Դոկուչան Գեորգի Արկադիի (1864-1921-ից հետո), գեներալ-մայոր (1916), Կովկասյան 5-րդ հրաձգային գնդի, ապա բրիգադի հրամանատար: 1918 թ. մասնակցել է Բաքվի պաշտպանությանը:

րավային մասը մինչև ք. Խոյ և ունենալ դժբախտ հայ ու ասորի փախստականների զանգված: Մենք կատարեցինք այն նույն սխալները, որոնք կային Թուրքիայի հետ մեր նախկին պատերազմներում: Պատերազմը սկսեցինք ինքնավստահ, փոքր ուժերով, արագ առաջանում էինք, սովորություն չունեինք հիմնավոր ամրացնել մեր կողմ անցած [գրավված] տարածքները և հետո նահանջում էինք ավելի ուժեղ թշնամու ճնշումից հետո, դրանով մենք կորցնում էինք հարգանքը ու կործանում էինք քրիստոնյա բնակչությանը:

Ֆոմա Իվանի Նազարբեկով [ստորագրություն]

ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 1, թ. 1-52: Բնագիր: Ձեռագիր:

**Ռուբեն Օ. Սահակյան** – գիտական հետաքրքրություններն ընդգրկում են Առաջին համաշխարհային պատերազմի ռուս-թուրքական ռազմաճակատում ընթացած մարտական գործողությունները, հայ կամավորական շարժումը, Հայոց ցեղասպանության պատմությունը, ինքնապաշտպանական մարտերը և այլն:

## Summary

### THE UNPRINTED MEMOIRS OF TOVMAS NAZARBEKYAN

The military actions in Caucasus front since July,  
1914 up to April 26, 1916

Ruben O. Sahakyan

**Key words** –Tovmas Nazarbekyan, Hovhannes Hakhverdyan, Andranik, Dro, Hamazasp, Keri, Hakob Chavriyan, Vorontsov-Dashkov, N. Yudenich.

Up to now only the last part of Tovmas Nazarbekyan's (Foma Nazarbekov, 1855–1931) memoirs including the period of November, 1917 up to July of 1918 has been published: it was published in original Russian language and edited by AC of RA Hrant Avetisyan. But the first part of his valuable memoirs including the description of military-political events taking place in Russian-Turkish (Caucasus) front during World War I, namely, since July, 1914 up to April 26, 1916, had remained unpublished.

Major-General of the Russian army and the Lieutenant-General of the Armenian army Tovmas Nazarbekyan was repressed during the Soviet years and then settled down in Tiflis living in hard material conditions. He has composed his memoirs in 1928–1929 based on the materials kept in his private archive, as well as, on correspondence with his combat friends, i.e. Generals I. Hakhverdov (Hovhannes Hakhverdyan) and Movses Silikyan. Because of not having sufficient financial means he composed his memoirs with chronological sequence but in copy-books.

In his memoirs the General gives interesting information about the preparations of World War I, his meetings with Armenian national figures and about the Armenian voluntary movement. He particularly recalls his relationships with Armenian 1 Voluntary group headed by Andranik and especially with the doctor Yakov Chavriev (Hakob Chavriyan).

By the given publication of the first copy-book of Tovmas Nazarbekyan's memoirs the reader learns about the attacking actions of the 2nd Caucasian shooting brigade that was included in the Azerbaijani detachment headed by General F. Chernozubov: it includes

the period of June–December of 1914. Before the counterattack of the Turkish army at Sarighamish the advancement of the Azeri detachment was so successful that General F. Chernozubov ordered T. Nazarbekyan, in case of Andranik's consent, to provide him with two mountain cannons for the raid on Van. But in connection with the battle of Sarighamish he gets an order of retreat which turns into a real disaster for Armenians that had joined the Russian army. But even when the fact of the defeat of the Turkish army at Sarighamish became known General Milashevski ,who had sloped from Sarighamish to Tiflis continued to give the orders of retreat. And only after the telegram of H.Chavriev, who was in Azeri detachment, addressed to the viceroy of Caucasus it came possible to get the permission for ceasing the retreat. Thus, while concluding the first part of his memoirs T. Nazarbekyan admitted that because of such unprepared attacks and aimless retreats they were losing their respect as they doomed the Christian population to destruction.

## Резюме

### **НЕИЗДАННЫЕ ВОСПОМИНАНИЯ ТОВМАСА НАЗАРБЕКЯНА**

Военные действия на Кавказском фронте с июля 1914 г.  
по 26 апреля 1916 г.

Рубен О. Саакян

**Ключевые слова** – Товмас Назарбекян, Ованес Ахвердян, Андраник, Дро, Амазасп, Кери, Акоп Завриян, Воронцов–Дашков, Н. Юденич.

До сих пор опубликована только последняя часть воспоминаний Товмаса Назарбекяна (Фома Назарбеков, 1855–1931), охватывающая период с ноября 1917 г. до июля 1918 г., в русском оригинале и под редакцией академика АН РА Гранта Аветисяна. Но так и осталась неизданной первая часть его ценных воспоминаний, содержащая описание военно–политических событий, развернувшихся во время Первой мировой войны на русско–турецком (Кавказском) фронте с июля 1914 г. по 26 апреля 1916 г.

Генерал–майор русской армии, генерал–лейтенант армянской армии Товмас Назарбекян в советские годы был репрессирован, затем обосновался в Тифлисе, живя в тяжелых материальных условиях.

Он изложил свои воспоминания в 1928–1929 гг. на основе сохранившихся в его личном архиве материалов, а также переписки с боевыми друзьями – генералами И. Ахвердовым (Ованес Ахвердян) и Мовсесом Силикяном. Не имея необходимых денежных средств, он в хронологической последовательности излагал воспоминания в ученических тетрадах.

В них генерал сообщает интересные сведения о подготовке к Первой мировой войне, о своих встречах с армянскими национальными деятелями, об армянском добровольческом движении. В частности, он вспоминает о своих связях с возглавляемой Андраником первой армянской добровольческой группой и в особенности с врачом Яковом Завриевым (Акопом Заврияном).

Первая тетрадь воспоминаний Товмаса Назарбекяна, представленная читателю в данной публикации, охватывает наступательные действия 2–ой кавказской стрелковой бригады, входящей в состав в Азербайджанского (Атрпатаканского) отряда, действующего в Северной Персии под начальством генерала Ф. Чернузубова против

турецко-курдских сил в период с июня по декабрь 1914 г. До контрнаступления турецкой армии под Сарыкамышом продвижение Азербайджанского отряда проходило так удачно, что генерал Ф. Чернозубов дал Т. Назарбекяну распоряжение в случае согласия Андраника предоставить ему два горных орудия для похода на Ван. Однако, в связи с началом Сарыкамышского сражения, он получает приказ об отступлении, что становится настоящим бедствием для армянского населения, присоединившегося к русским войскам. Но даже после того, как становится известным факт поражения турецкой армии под Сарыкамышом, сбежавший в Тифлис генерал Милашевский продолжал отдавать приказы об отступлении. И лишь благодаря телеграмме находящегося в Азербайджанском отряде Я. Завриева Кавказскому наместнику удается получить разрешение приостановить отступление.

Поэтому, заканчивая первую часть своих воспоминаний, Т. Назарбекян признается, что в результате подобных неподготовленных наступлений и бесцельных отступлений они теряли уважение, так как обрекали христианское население на уничтожение.

## REFERENCES

1. **A-Do**, Im hish'ogh'ut'yunnerə, Ye'r., 2015, eg 303 **(in Armenian)**.
2. Armjanskij korpus protiv tureckix vojsk (nojabr' 1917 g. - ijul' 1918 g.). Vospomnaniya generala F. I. Nazarbekova. «Banber Hajastani arxivneri», N3, 1992, s. 34-153 **(in Russian)**.
3. **НАА**, f. 45, c. 1, g. 41, t'. 1, 8 **(in Armenian)**.
4. **Karapetjan M. L.**, General-leytenant Movses Silikyan (K 150-letiju so dnja rojdenija), HH GAA, «Lraber hasarakakan gitut'yunneri», 2012, N4, s. 291-294 **(in Russian)**.
5. **Korsun N. G.**, Sarikamyshskaya operaciya na Kavkazskom fronte mirovoj vojny v 1914-1915 gg., Moskva, 1937, s. 39 **(in Russian)**.
6. **Maslovskij E. V.**, Mirovaja vojna na Kavkazskom fronte 1914-1917 gg., Parizh, 1933, s. 47-48 **(in Russian)**.
7. **Maslovskij E. V.**, Ukaz. soch., s. 82 **(in Russian)**.
8. **R. de Nogales**, Four Years beneath the Crescent. Transl. from the Spanish by M. Lee. With an introd. by Lieut.-Colonel E. Davis. N. Y., London, 1926, p. 25.
9. **Sahakyan R. O.**, Aragin hamachxarhayin paterazmi naxoryakin yev' ənt'acqum rus-t'urqakan razmac'akatum hetaxuzakan c'arayut'yunneri gorc'uneut'yan patmut'yunic (1914-1917 t't'), «Patma-banasirakan handes», E. 2001, N 3, eg 94-119 **(in Armenian)**
10. **Sahakyan R. O.**, Lcytenant-General Tovmas Nazarbekyan's role in military operations of the Russian army against the Turkish genocidal forces (1914—1916). Dedicated to the 160th birth anniversary of Tovmas Nazarbekyan <http://www.fundamentalarmenology.am/datas/pdfs/270.pdf> **(in Armenian)**.
11. **Sahakyan R. O.**, Rusakan banaki haykakan yev' qrdakan gokatnerə Aragin hamachxarhajin paterazmi tarinerin, «Banber Hajastani arxivneri», E. 2010, N1, eg 26-40 **(in Armenian)**.
12. **Sahakyan R. O.**, General-leytenant Movses Silikyan (Kensagrutyan anhayt eger), PBH, 2012, N2, eg. 63-76 **(in Armenian)**.
13. **Sahakyan R. O.**, Anxusap'elin. Andranik Ozanyan yev' T'ovmas Nazarbekyan. Zugakshirner, «Vem», 2017, N 2, april-hunis, eg 214-229 **(in Armenian)**.



14. **Saakjan R. O.**, Rol' generala T. Nazarbekjavna v bitve pod Dil'manam 1915 goda (po arxivnym materialam), «Istoriko-filologicheskij jurnal», 2016, N2, s. 209-229 **(in Russian)**.
15. T'. Nazarbekyani andz'nakan gorc'ə Ryazani hamakentronacman c''ambarum, tes <http://stopgulag.org/object/63445518?lc=ru> **(in Armenian)**.
16. **W. E. D. Allen, P. Muratoff**. Caucasian Battlefields: A History of the Wars on the Turco-Caucasian Border, 1828-1921. Cambridge, 1953, p. 250.
17. **Zhigalina E. V.**, Russkie I kurdy Severo-Zapadnogo Irana vo vremja Pervoj mirovoj vojny. Novye dokumenty, «Vostochnij arxiv», 2012, N 2, s. 54 **(in Russian)**.